Ն. ՄԱՌ

ՀԱՅԿԱԿԱՆ ՄԵՍԱՊՈՒԹԻՒՆ

ՆԻԿՈՂԱՅՈՍ ՄԱՌ

ՀԱՅԿԱԿԱՆ ՄԾԱԿՈՒՅԹԸ

Նրա արմատները և նախապատմական կապերը ըստ լեզվագիտության

ԵՐԵՎԱՆ «ՀԱՅԱՍՏԱՆ» 1989

ԳՄԴ 71 (22)
Մ 300

Առաջաբանը Հ. ԴԱՆԱԼԱՆՅԱՆԻ

Մառ Ն.

Մ 300 Հայկական մշակույթը՝ Նրա արմատները և նախապատմ. կապերը ըստ լեզվագիտության / Առաջաբանը՝ Հ. Դանալանյանի.— Եր.: Հայաստան, 1989.— 43 էջ:

Գրքույկը ամփոփում է ակադեմիկոս Ն. Մառի Փարիզում հայ ուսանողության համար կարդացած դասախոսությունը: Գրքույկում խոսվում է հայ արվեստի պատմության, գրականության, ճարտարապետության և հայոց լեզվի մասին:

Այն նախատեսված է ընթերցող լայն շրջանների համար:

0505640000

Մ ———————— չհայտարարված ԳՄԴ 71 (2 Հ)

701 (01)—89

ISBN *5—540—00720—4*

© «Հայաստան» հրատարակչություն, 1989

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Вот эта книжка небольшая
томов премногих тяжелей.

А. ФЕТ

Մեծանուն գիտնական և հայագետ ակադեմիկոս Նիկողայոս Մառի ծառայությունները մեր մշակույթի ասպարեզում անգնահատելի են: Մոտիկից ծանոթանալով, ապա և ուսումնասիրելով հայոց պատմությունը, ճարտարապետությունը, հայոց լեզուն ու գրականությունը, մեծ գիտնականը նախ ինքը հիացավ հայ հանճարի ստեղծագործություններով, ապա և հայագիտության բնագավառում կատարած իր ծանրակշիռ աշխատություններով հիացրեց գիտական աշխարհին, ցույց տալով և արժեքավորելով մեր մշակույթի գանձերը, որ երկնել է հայի խորունկ հոգին: Հայ մշակույթի մասին Փարիզում կարդացած, ժամ ու կես տևած իր այդ դասախոսության մեջ, Մառը խտացած կերպով, նոր ու խիստ արժեքավոր մտքեր է հայտնել հայ մշակույթի մասին: Այդ դասախոսությունը 1925 թ. տպագրվեց Փարիզի հայ ուսանողության և նրա նախագահ՝ Արման Կոթիկյանի ջանքերով: Այժմ այդ գրքույկից մի օրինակ միայն կա Մլասնիկյանի անվան հանրային գրադարանի անձեռնմխելի ֆոնդում:

«Ծագումով հայ լինելու պատիվը չունիմ»,— ասում է ակադեմիկոս Նիկողայոս Մառը: Սակայն նա շատ ավելի բան արաւրեց մեր մշակույթի համար, որով և պատվավոր տեղ գրավեց հայագիտության ասպարեզում: Իր մոնումենտալ ուսումնասիրություններով մեծանուն գիտնականը կառուցեց իր արձանը մեր մշակույթի և մեր սրտերի մեջ: Պետերբուրգի համալսարանի հայ-վրացական բանասիրության ամբիոնի աշխատանքները գլխավորելիս, Մառը պատրաստեց նաև ծագումով հայ տաղանդավոր երիտասարդ գիտնականների մի ամբողջ շողշողուն հույլ, որոնք շարունակեցին իրենց մեծ ուսուցչի գոր-

ծը: Մառի այդ աշակերտներից էին Նիկողայոս Ադոնցը, Հովսեփ Օրբելին, Գրիգոր Ղափանցյանը, Աշխարհբեկ Քալանթարը, Լևոն Քալանթարը: Մառի մոտ է ուսանել նաև մեծատաղանդ բանաստեղծ Վահան Տերյանը, որը Մառի խորհրդով թարգմանեց Շթթա Ռուսթավելու «Ընձենավորի» նախերգանքը և այն էլ այնպես, որ Մառը այդ թարգմանությունը անվանեց բնագրին համազոր, ինչպես ինքն է ասել՝ «Արևի կտոր»: Անիում ծավալած իր երկարամյա պեղումների ժամանակ Մառը իր հետ տանում էր նաև իր հայ աշակերտներին, հնագիտական գործի մեջ մասնագիտանալու և հմտանալու նպատակով: Մառը հնարավորություն ընձեռեց նաև նշանավոր հնագետ-ճարտարապետ Թորոս Թորամանյանին կատարելու իր չափագրություններն ու ուսումնասիրությունները՝ Անիի տաճարների և քաղաքացիական շենքերին վերաբերյալ:

Ակադեմիկոս Մառը իր «Անի» խորագիրը կրող կապիտալ աշխատությամբ, ինչպես և Թորամանյանը իր հետազոտություններով, հիացրին ռուս և եվրոպական գիտության ներկայացուցիչներին: Ծագումով հայ չլինելով հանդերձ Մառը Հովհաննես Թումանյանի հետ միասին մտահոգված էր նաև հայկական ակադեմիա ստեղծելու խնդրով, քանի որ «հունձքն առատ էր հայրենի մեր երկրում, բայց մշակները սակավ»: Հիշենք թե ինչպիսի մեծ հիացմունքով է խոսել Հովհաննես Թումանյանը հայկական ակադեմիա ստեղծելու հոգսերով տարված Մառի մասին: Իր նամակներից մեկում, ուղղված հայագետ Մեսրոպ Տեր-Մովսիսյանին Թումանյանը հետևյալն է գրել Մառի մասին. «Տո էդպես էլ լավ մարդ կլինի՞: Երբ է շատանալու էդ տեսակ մարդկանց թիվը—համ լավ մարդ, համ գիտնական»: Իր մեկ ուրիշ նամակում ուղղված Նիկողայոս Մառին Թումանյանը ասում է. «Պետերբուրգ է գալու նոր կաթողիկոսը: Կարծում եմ այս շատ լավ առիթ ու դեպք է խընդիրը հաստատ հողի վրա դնելու և ծրագրից գործի անցնելու: Ես սրտանց ուրախ եմ, որ հայկական ակադեմիայի և հայագիտության գործը մեր մեջ հաջողվելու է Ձեր ձեռքով, կապվելու է Ձեզ հետ, որ այնքան վայելուչ ու գեղեցիկ գալիս է Ձեր սիրելի անձնավորությանը, Ձեր դիրքին ու հայագիտությանն արած անգնահատելի թանկագին ծառայություններին և Ձեր մեծ պատրաստությանը: Այստեղ

էլ,— շարունակում է Թումանյանը,— դիմում կանենք կաթողիկոսին, բայց այս գործի կաթողիկոսը դուք եք լինելու»: Մասնավորեցնենք մեր խոսքը, Փարիզում կայացած դասախոսության մեջ Մառը ի շարս այլ հարցերի, որոնց մասին խոսելու ենք ստորև, բավական հանգամանորեն կանգ է առնում Անի քաղաքի Հարտարապետական բացառիկ նշանակություն ունեցող եկեղեցական և աշխարհիկ կառույցների վրա: «Հայկական գեղանի շինարարությունն Անիի անկումից հետո չէր սպառվում... գեղարվեստի ազնվացնող նմուշներ էին տալիս իրենց ընտանյալներին, ամեն ազգի մատչելի ճարտարապետական գծերի ներդաշնակ երաժշտությամբ: Այս շինարարություններից ոչ մեկը մյուսին նման չէ,—հիացմունքով նկատում է Մառը և շարունակում,— ամեն եկեղեցի առանձին տեսակ, առանձին-առանձին մարմնացած ինքնուրույնություն է մինչև իսկ հատակագծի վերամշակման մեջ...» Մառը ու նրա հետ նաև Թորամանյանը ապացուցում են, որ դրանք հայ ազգային հանճարի ոճի ուրույն կնիքն են կրում իրենց վրա: «Անին նվաճող արաբներից գոնե պայտաձև կամարնե՞րն են,— հարց է տալիս գիտնականը ինքն իրեն և պատասխանում,— երբեք: Պայտաձև կամարը Հայաստանում տիրապետում է արաբականից առաջ»: «Ինքը Անին է եղել, Անին նվաճողների համար ընդօրինակման աղբյուր»,— եզրակացնում է գիտնականը Փարիզում կարդացած իր այդ դասախոսության մեջ: Հայկական ճարտարապետությունից՝ այդ «քարացած երաժշտությունից» հետո անցնելով պոեզիային, Մառը այստեղ էլ օտար երկրներից բերած բոլոր չի համարում հայկական պոեզիան: «Որտեղի՞ց է անցել Նարեկացու ինքնուրույնությունը,— հարցնում է գիտնականը ինքն իրեն և պատասխանում:— Բնավ հույներից չէ: Ուրե՞մն ասորիներից, պարսիկներից թե արաբներից, բնավ չէ: Նարեկացին, ինչպես և առհասարակ զուտ եկեղեցական երաժշտությունը, ճարտարապետությունը... Միշտ իր ինքնուրույնությանը դրոշմակիր, ինչպես և սքանչելի լեզուն: Բավ է հիշել Աստվածաշնչի թարգմանությունը, և քանիցս, և ինչ տեսակ ոճով, երկու-երեք թարգմանություն կկարծեք թե այս թարգմանությունը գոնյա ինքնուրույնություն չի կարող ունենալ: Ընդհակառակը: Նախկին հայկական թարգմանությունը,

որի նման մենք, եթե բաց առնենք նրա եղբայրակից վրաց ժողովրդի թարգմանությունն հայերեն բնագրից կախված, նույն եղանակով կապված չենք պատահում բնավ ուրիշ քրիստոնյա ազգերի մոտ»: Մառի ասածի ճշմարտությունը հաստատող կարծիք են հայտնել և Եվրոպայի գիտնականները Աստվածաշնչի հայերեն թարգմանությունը անվանելով «թարգմանությունների թագուհի»: Հայ հանճարի մեծ անհատականության բոցե կնիքով է դրոշմված և միջնադարյան հայ պոեզիան: Վալերի Բրյուսովի նման Մառը ևս հիացմունքի այսպիսի խոսքեր է ասում մեր միջնադարյան տաղերգուների մասին. «որպիսի պարզունակ ստեղծագործություն ամենամոտն նրբագույն զգացմունքներով... ի՜նչ հմայեցուցիչ երաժշտություն... չպիտի զարմանանք, որ Վալերի Բրյուսովի ռուսերեն թարգմանությունը ո՛չ միայն նպաստել է հայ ազգի գեղարվեստական ճաշակը գնահատելու գործին ռուս հասարակության մեջ, այլև մտերմության գաղափարական հիմքն է դրել մարդկության ստեղծագործության ամենաբարձր շրջանում»: Համեմատելով հետագա դարերի եվրոպական նշանավոր պոետների ստեղծագործությունների հետ, Բրյուսովը Մառի պես առաջնության դափնիները տալիս է ծիածանի յոթ գույներով լուսերանգված հայ միջնադարյան տաղերգուների ստեղծագործություններին: Բրյուսովի բարձրարվեստ թարգմանությունները, ինչպես և Արշակ Չոպանյանի կատարած ֆրանսերեն թարգմանությունները ազդակ են դարձել ռուսական և ֆրանսիական գրական շրջանների համար: Փարիզում կարդացած իր այդ դասախոսություններում ակադեմիկոս Մառը միջնադարյան տաղերգուներից հասնում է մինչև 18-րդ դարի աշուղական գրականության ամենամեծին՝ Սայաթ-Նովային, որին «կրակ է տվել ու երել» նրա գյոզալը, պատճառ դառնալով անհուն վշտի ու տառապանքի: «Տառապանքից է, որ ծնվում են մեծ բաները»,— ճշմարտապես նկատում է գիտնականը: Սայաթ-Նովան հայ լինելով հանդերձ ստեղծագործել է երեք լեզուներով, նրա երգերը, ասում է գիտնականը, «ամեն ցեղի սրտին մոտ ներդաշնակ եղանակներ, զգացումներ, գաղափարներ են արտահայտել, ո՛չ թե միայն բառեր» շաղ տվել իր տաղերում: Մառն այստեղ Սայաթ-Նովայի երգերի համամարդկային բովանդակության համընդհանուր ճանաչողության և ազդեցության ոլորտի հանգա-

մանքն էլ է մատնանշել: Ընդհանրապես չժխտելով ազգերի փոխազդեցությունների խնդիրը, Մառը իր այդ դասախոսության մեջ գրում է. «Իհարկե ոչ մի կուլտուրա չի կարող հասկացվել առանց ազդեցության և փոխադարձ արդյունագործության, բայց հայկական կուլտուրան առանձին տեղ է բռնում այս հարցում...

Հայերը առաջինն են եղել, որ միջազգայնության շահերը և տիեզերական պատմության ըմբռնումը հասկացել են դեռ միջին դարերում»: Եվ այսպես տարածքով փոքր, քանակով ևս փոքր մեր ժողովուրդը ուր որ գնացել է կամ գաղթել է Լեհաստան թե Կիլիկիա, Հնդկաստան թե Իտալիա, Ռուսաստան և այլուր, տարածել է իր կուլտուրան: Այդ ժողովուրդներից կրած ազդեցություններն էլ այնպես է յուրացրել, որ այդ ստացածի վրա դրոշմել է իր սեփական ազգային կնիքը:

Մի առիթով Բրյուսովի հետ զրուցելիս Էմիլ Վերհարնը նկատել է. «Բրյուսով, մի ասեք թե Բելգիան փոքր է: Պատմությունը Նրան մեծ է դարձրել: Յուրաքանչյուր թիզ հողը նրա տասն անգամ ավելի մեծ է, որովհետև լեցուն է պատմական հուշերով»: Մեր երկիրը Մառի խոսքով ասած «նվիրական այդ հողը լեփ-լեցուն է խաչքարերով, ինչ ասել է խաչքար—հայկական գեղարվեստը բացառիկ կերպով բնորոշող մի «հուշիկ հայրենաց»»:

Փարիզահայ ուսանողության համար կարդացած իր այդ դասախոսության մեջ Մառը մեծ տեղ է տալիս և հայոց լեզվին, «այդ արքայական լեզվին»: Լեզուն ժողովրդի հոգին է իր հնչեղ ձևի մեջ: «Հնդեվրոպական լեզվի հետ խառնվելուց առաջ, հայոց լեզվի զուտ հաբեթական շերտը բնավ պարզ բաղադրություն, վայրենի տունկ չէր ներկայացնում, նա արդեն այն զուտ հաբեթական լինելու շրջանում փայփայված, իբրև խնամքով պատրաստված ազնիվ պտղաբեր ծառ, խառնըված կամ բազմիցս խառնաձևված տեսակն էր ներկայացնում... Հայոց լեզվի մեջ, անկախ հնդեվրոպական շերտից, տեսնում ենք բառերի զարմանալի հարստություն և ձևերի անսահման ընտրություն»:

Երբ Բրյուսովը հանդես եկավ Թիֆլիսում Հայաստանի պոեզիայի մասին մի դասախոսությամբ հայտարարեց, որ հայոց

բանաստեղծությունը հայ ժողովրդի «ազնվականության վկայականն է»:

Հովհաննես Թումանյանը դիմելով Բրյուսովին ասում է. «Մեր թանկագին հյուր և ազնիվ բարեկամ, մենք միշտ ունեցել ենք էդ բարձր վկայականը: Բայց էդ վկայականը էն վկայականներից չի, որոնց վրա դրված է մարդկային իշխանության կնիքը, էդ էն վկայականներից է, որոնց վրա բնությունն ու Աստված են դրել իրենց կնիք, և, դրա համար էլ ինչքան դժվար է դրա ունենալը, էնքան էլ դժվար է կարդալը... Դուք եղաք էն հազվագյուտ մարդկանցից մինը, որ կարողացաք կարդալ էս կախարդական գիրը ամբողջ աշխարհի առջև»: Ակադեմիկոս Մառը ևս այն հազվագյուտ մարդկանցից մեկն էր, որ կարողացավ կարդալ այդ կախարդական գրերը և ի լուր գիտական աշխարհի հայտարարեց, որ փոքրաքանակ հայ ժողովուրդը ունի այդ «ազնվականության վկայագիրը»:

Հ. ՊԱՆԱԼԱՆՅԱՆ

Մատենաշար Թիվ 1 Փարիզի Հայ Ուս. Միության

ՊՐՈՖԵՍՍՈՐ Ն. ՄԱՌ

ՀԱՅԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՅԹԸ

ՆՐԱ ԱՐՄԱՏՆԵՐԸ ԵՎ ՆԱԽԱՊԱՏՄԱԿԱՆ ԿԱՊԵՐԸ

ԸՍՏ ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ

(Փարիզի Հայ Ուս. Միության կողմից Սորբոնի Միշլեի ամֆիթատրոնը կազմակերպված երեկոյթին մեջ կարդացած դասախոսությունը)

Հրատարակիչ Յ. Բ. ԹՅՈՒՐԱՊՅԱՆ

ՏՊԱՐԱՆ «ԱՐՁԱԳԱՆԳ ՓԱՐԻԶԻ»Ի
227, Bd. Raspail
ՓԱՐԻԶ

1925

Առաջին հրատարակության անվանաթերթը

Փարիզի հայ ուսանող երիտասարդությունը, իր նախագահի՝ Պ. Կոթիկյանի բերանով դիմել էր ինձ խնդրելով, որ մի դասախոսություն կարդամ հայոց անցյալից ինձ զբաղեցնող որևէ հարցի վրա։ Շնորհակալիքս հայտնեցի ինձ պատիվ բերող այս հրավերին համար. շնորհակալ եմ նաև հանդիսականներիդ, նախօրոք ներողություն խնդրելով ձեր մեկ ու քառորդ ժամվան ուշադրությունը չարաչար գործածելուս համար։

Խոստովանում եմ, որ գրեթե դիմումի րոպեից մտահոգության մեջ էի, թե ինչպե՞ս կատարեմ պարտականությունս. էլ չեմ խոսում լեզվի մասին. իմ դասախոսությանց սովորական լեզուն ռուսերենը լինելուց զատ, ծագումով հայ լինելու պատիվը չունիմ. և ունկնդիրները, հասկանալի է, ներողամտություն պիտի ցույց տան օտար մարդու հայերենը լսելիս։

Սակայն մտահոգությունս վերաբերում էր ուրիշ բանի՝ դասախոսելի նյութի ընտրության։ Խնդիրն այն չէ, որ ներկայումս ինձ զբաղեցնող գիտական հարցերը համաշխարհայնության գույն և համ ունին, և Եվրոպայի, Աֆրիկեի, Ասիայի կամ Եվր-Աֆր-Ասիայի ցպատմական կուլտուրայի լայն գիրկը խորասուզված, տարվել եմ մարդկության իբրև խոսող էության և մանավանդ Եվրոպա Նախաբնակիչների լեզվի ուսումնասիրությամբ։

Բանն այն է, որ հայոց կուլտուրական անցյալն ևս, մեր համոզմունքով, չէ կարելի ներկայացնել և ոչ իսկ ներելի է ուսումնասիրել այլապես քան իբրև նույն համամարդկային կուլտուրական ամբողջության էական և ստեղծագործիչ մաս։ Հայոց ազգը, այն հայոց ազգը, որի համար ժամանակիս տիրապետող ուժերը դժվարանում են ինքնուրույն կյանքով հանգիստ ապրելու տեղ որոշել երկրագնդի վրա, և խնդրելի տեղը չեն գտնում, չեն տեսնում մինչև անգամ իրանց՝ հայերի՝ բազմահազար կուլտուրայի սքանչելի հիշատակարաններով ծածկված նվիրական հողը, որի վրա ապրող ազգը ամ-

բողջ քաղաքակիրթ մարդկության, մասնավորապես Եվրոպայի ազգերին հետ անժխտելի կապերով միացած լինելով, ոչ միայն պատիվ կբերե, այլ և նոցա կուլտուրական ծագումը և զարգացման ձևափոխումներն ուսումնասիրելու համար ամենակարևոր ազդակ մըն է։

Բայց ահա ցավս—ինչպես ժամուկեսում լուսաբանել այսպիսի բարդ հանգամանք հանրամատչելի կերպով, մինչ նյութըն իր ճոխությամբ կարող է առարկա լինել տարիներ տևող դասընթացքի. ի՞նչ մոգական միջոցներով հասկանալի դարձնել այդ իսկ լուսաբանությունն հասարակության լայն շերտեր ներկայացնող հանդիսականներիդ, երբ, ավա՞ղ, տակավին ընդհանուր լեզու, գիտական լեզու գրեթե չեմ գտնում մինչև անգամ գիտական աշխարհում, և ինձ իմ փորբաթիվ աշակերտներիս հետ զգում եմ կղզիացած հայոց ազգի ժամանակակից բախտի նման, անտանելի սարսափի, անտանելի մենակության մեջ։ Այսպես, ոչ միայն իմ անձնական դժկամությունս, այլև այս հանգամանքը, պետք էր նկատել իբրև գրավական, որ այսօրվա դասախոսությունս հառաջուց արդեն անհետևանք և նույնիսկ անհաջողության դատապարտված համարվեր։ Սակայն եթե էլի համաձայնվել եմ այս ինձ համար դժվար գործը հանձն առնել, միմիայն հույսի այն նսեմ լույսով քաջալերված, որ եթե մենք ընդհանուր գիտական լեզու չունինք, գոնե ոգևորված ենք և մղվում ենք մի շատ թանկագին ընդհանուր բանով, կուլտուրայի և առաջադիմության միակ և ամենազորեղ ուժով՝ սիրով դեպի միևնույն առարկան՝ հայոց ազգը,— դուք ձեր հայկական ծագումով, ես՝ իմ գիտական, զուտ վերացական-գիտական ձգտումներով։

Որո՞նք են այդ գիտական ձգտումները։ Դասախոսության վերնագրի մեջ ասված է՝ «ըստ լեզվագիտության»։ Մի՞թե հայերենի մասին լեզվագիտությունը այնքան հառաջադիմություն է արել, որ նորա շնորհիվ արդեն ձեռնհաս ենք դառնում հայոց ազգի ոչ միայն քաղաքակրթական փոխառիությունները, այլև նրա կուլտուրական ինքնուրույն նախապատմական կապերը և մինչև իսկ արմատները երևան հանել։

Կուլտուրայի արմատների և նախապատմական կապերի մասին մենք, գիտնականներս էլ, նույնգունակ գաղափար չունենք։ Միջազգային իրավունքի հարցը շոշափելով, հայտնի ռուս հնագետ պրոֆ. Ռոստովցևը արդարացի կասկածանքով է վերաբերվում այն անջատման, որ շատերը տեսնում են անբաժանելի կապերով միացած միջին դարերի և հին դասական շրջանի միջև. «Ժամանակակից պետականությունն, իրավունքը, կրոնքը և կուլտուրան, իրանց հիմքերով անդամ են դասական աշխարհին. լսում ենք նրանից, և մեր ամբողջ մտավորականությունը, իր ամբողջ զարգացումը կատարյալ առեղծված կը դառնար, եթե գիտցած չլիներինք, որ նրա հիմքերը ստեղծված են դասական դարում»[1]։

Եվրոպական մեր արդի քաղաքակրթության արմատներն ինչո՞ւ ենթադրել դասական աշխարհում և ոչ ավելի հին դարի շրջանում, լինի նա նույն Միջերկրայքում թե Միջագետքի սահմաններում։

Մեր աշխարհահայեցողությամբ նոր շրջանների հիմքերը կամ արմատներն այսքան հեռավոր ժամանակ տանելու կարիք չկա։

Նոր երևան եկող կուլտուրական երևույթի հիմքերը կամ արմատները, ինչպես և նրա ստեղծող ոգին գտնվում են իր ժամանակի միջավայրում։ Իսկ կապերը, մինչև իսկ այն հիմքերի կապերը, մեզ հեռու կարող են տանել, շատ հեռու, հին և հնագույն քաղաքակրթված աշխարհից էլ դեն, հասցնելով մեզ նախապատմական և ցեղատմական ժամանակներին, որի հասարակական ստեղծագործող տարրերը, ցեղային խավերը, ժողովրդի զանգվածի մեջ շարունակում են պահել նույն ստեղծագործական ուժը և հինավուրց լեզուների վերապրումները։

Տիրապետող լեզվագիտական վարդապետությունը, կառուցանելով իր ուսումնասիրությունը նախ և առաջ ամենակատարյալ ֆլեկտիվ լեզուների վրա—այսպես ասած հնդեվրոպական լեզուների վրա—և ստեղծելով նրանց սքանչելի

[1] **M. J. Rastovzeff.** Mejdounarodnia otnochenia i mejdounarodnoe pravo V drevnem mire (sovremenia sapiski). Parij, 1921, 4 str. 129.

կերպով մշակված հոմեմատական քերականությունը, դարավված է եղել պատմական քաղաքակրթական նշանակություն ունեցող աղգային լեզուներով, այնպես ինչպես նոցա զարգացումը հանդիսանում է մեռած թե կենդանի, բայց գրականացրած, միշտ արհեստական կացության մեջ։ Նրա, այս լեզվագիտության, ստեղծած ենթադրական նախալեզուն վազուց հայտնի է արդեն, երբեք գոյություն չի ունեցել։ Իսկ լեզուների ցեղային զարգացումն և նրանց անցուցած զանազան ստեղծագործական նախապատմական և ըսկատմական շրջանները բարձիթող են արված։

Կկարծվի թե այս նախապատմական շրջաններից և—ավելի ևս—պատմական ժամանակներից առաջ եղած ցեղային թե նախացեղային հասարակական կյանքից լեզվի հիշատակարաններ կա՛մ բնավ չեն մնացել, կամ եթե մնացել են, միայն Ամերիկայի և Աֆրիկեի այսպես ասած վայրենի ցեզերու մեջ կարելի է հանդիպել անոնց։ Գալով քազաքակրթված ազգերին, որոնց թվից չի կարելի հեռացնել հայերին, բոլորը կատարյալ զարգացած լեզուների տերեր են։

Սակայն մի բան է ապրդել գիտության ուշադրությունից։ Լեզուները չեն ծագում երբեք մի աղբյուրից, այլ բազմաթիվ աղբյուրներից, նրանց խաչաձևումից, զանազան ցեղային լեզուների միացումից և ձուլումից։ Լեզվի ծագման և զարգացման այս օրենքից չեն ազատվել և հնդեվրոպական լեզուները։ Ընդհակառակն, հենց այս օրենքին են նոքա պարտական իրանց կատարելագործությունը։

Որքան խաչաձևում, այնքան մեծ կատարելագործություն։ Իսկ երբ այդ խաչաձևումն երկու race-ի թե զանազան ընտանիքի լեզուների մեջն է տեղի ունենում, ո՛րքան խաչաձևում է հանդիպում, այնքան ավելի արվեստական կատարելագործություն է ստացվում և նույնքան էլ աչքի ընկնում է սկըզբնատիպարներից հեռանալը, ցպատմական բնաբույս հատկությունների կորուստը։ Հետևապես իսկական լեզվագիտության համար—«ցեղաոեր» եթե չասենք «բանասերի» տեղ ավելի պատշաճ խոսք գործածելով— ցեղաբանական կամ éthnologique լեզվագիտության համար նոքա նվազ կարևորություն կներկայացնեն և շատ անգամ անպիտոք են։ Բայց կա լեզունէրի մի առանձին խումբ, երբեմն տիեզերական ծավալ

ունեցող ընտանիք, այժմ ցիր ու ցան եղած փոքրաթիվ լեզուներ, որոնք պահել են իրանց ընտանեկան կուստությունը. մարդկային խոսքի զարգացման օրենքի համեմատ բազմիցս խաչաձևվելով ազգակից լեզուների հետ, նոքա ազատ են մնացել օտար ընտանիքի լեզուների հետ ձուլվելուց և իրանց մեջ կրում են և՛ ամենահին շրջանների առատ, տեսակ-տեսակ վերապրումներ, և՛ մինչև անգամ նախնական լեզուների ստեղծագործության աղբյուրը՝ կուսական բնազդումը։

Այս ինքնուրույն Հաբեթական կոչված ընտանիքի, նրա առանձնահատկությունների, անունի և նշանակության մասին որոշ գաղափար կարող է տալ ռուսերեն տպված «Կովկաս Երրորդ ցեղային տարրը Միջերկրյա կուլտուրայի ստեղծման մեջ» գրքույկս։

Առանձին պատճառները ստիպեցին Հաբեթական սլայմանավոր կոչումը նրանց հատկացնել։ Այս ընտանիքի լեզուների վաղուց արդեն կղզիացած գումարումը ներկայումս գոնվում է միայն Կովկասում, և նրանցից հետու ընկած առանձնացած գոյություն է պահում էլի երկու լեզու, մեկը՝ Վերշիկ Պամիրի լանջերում Հինդուկուշից դեն Միջին Ասիայում, մյուսը՝ Բասկերեն, Գաղղիայի և Սպանիայի մեջ։ Հին ժամանակ տասնյակ գրականական լեզուներ կային, հնագույն դարերից ի վեր, մի քանիսը բևեռագիր։ Նույն Հաբեթական ընտանիքին էր պատկանում նաև Եորուակերենը։ Եթե Հունաստանի և Փոքր Ասիայի հնագետները pré-hellénique կամ ցհունական կուլտուրական աշխարհի գոյությունը իրական կերպով ապացուցել են շոշափելի նյութերեն հիշատակարաններով, և այս նախապատմական կուլտուրայի մեծ ծավալը հաստատել, ուրիշները փորձում են լուսաբանել իրանց մատչելի լեզվագիտական միջոցներով և պատմական վկայություններով։ Ինչ-որ անորոշ իբր թե «ասիանիկ» ընտանիքից ի թիվ որոց համարձակագույն երիտասարդ գաղղիացի գիտնական Autran, Հաբեթական լեզվագիտությունը մի քանի երկարաձիգ դարաշրջանի է բաժանում, սկսյալ ցպատմական ժամանակներից, Հաբեթական ցեղի ստեղծագործական դերն է նշմարում լեզուների նոր տեսակներն առաջ բերելու գործում, և Ա.ֆրիկեի ծովեզերքներում, ի միջի այլոց և եգիպտերենի և Հաբե-

թական լեզուների հնաբանությունը մեզ հասցնում է «աստուն» կամ «խոստուն» մարդկության ամենահին ցպատմական գոյության հնաքարյա (peléolithique) դարաշրջանում։

Վայրենի վերապրումներով անմատչելի դարձնելով մոտիկ ժամանակների և ազգերի պատմական իրականությունը շոշափել, առանց այս թե այն դյուրագրգիռ ազգային զգացմունքին դիպչելու, մեր ժամանակակից միջազգային հարաբերությունները բնականապես ներշնչում են գիտնականներիս մեր որոնումները, հետազոտությունները տանել, ձեզ հետներս քաշելով հնագույն և հեռագույն վայրերը, թերևս այնտեղ մեզ էլ մերժված հանգիստ foyer-ն գտնենք, հայկական կուլտուրայի մասին զրույց աննենք, մեր կարծիքները հայտնենք ըստ լեզվագիտության։

Ներկա պարագաներումս այս կարծիքներս թվում է թե առասպել են. բայց արդյո՞ք կյանքը, մեր կյանքը, և Հայոց կյանքը նույնպես առասպել չէ՞, սարսափելի առասպել։ Կուլտուրան նույնպես առասպել է. նա կյանքի հմայեցուցիչ առասպելներից ամենագեղեցիկ, ամենափայլուն տեսակն է։ Եվ իմ, գիտնականիս, ինքնաճանաչությունը բնավ չի ընկրճվում, երբ հաբեթագիտական ուսումը, մարդկության ամենաերևելի և ազնիվ, և գեղեցիկ առասպելները, հունաց և հրեաների ավանդությունները, ոչ միայն բացատրում է, այլև իբրև իրականություն է երևան հանում լեզվի տվյալների միջոցով։

Բայց ի՞նչ է լեզուն։ Մարդու ներքին կյանքի բացահայտումը և արդարությունը, ոչ միայն խոսք բանավոր թե գրավոր, այլ և թե՛ նյութեղեն, և թե՛ հասարակական մարմնացած հիշատակարաններ։ Աղթամարի հանքը, քանդակագործության հրաշքը—ասում են, ի դարում քանդված Անիի ինքնավարության եղանակը— խասինջուությունը, Դվինի և Շահապիվանի ժողովները, Վարդանանց քաջագործությունները, նրանց նահատակությունը, համաշխարհային առևտրի ծառայող ինը կամարակապ սքանչելի ճարպկությամբ կառուցված կամուրջները մի փոքրիկ գետի՝ Ախուրյանի վրա, և հազար ու մեկ այլ հայոց ազգի կամ ազգայինների ստեղծագործությունները Հայաստանից էլ դուրս, ի՞նչ են եթե ոչ հայոց լեզու, հայկական լեզու։ Եվ հայերեն լեզուն, սովորական իմաս-

ատով հասկացված լեզուն, այդ բանն էլ վկայում է։ Նա էլ նախնական մարդկության լեզվի հատկությունները պահելով, մեզ ցույց է տալիս, որ լեզուն չէ միայն խոսքերի հավաքումը, այլև գործերի, լեզուն՝ ինչպես և հաբեթագիտությունը հասկանում է՝ լոկ բառեր չեն։ Հայերենում «բան» բառը ի զուր չէր նշանակում և «խոսք», ինչպես հունարենում «լո՛գոս» կնշանակե միաժամանակ գործ կամ աւարկա. և այս եզելությունը աշխարհաբարը պարզ ցույց է տալիս— «ի՞նչ բան», «բանիող», «բանվորներ» և այլ ասացվածների մեջ։ Արդեն այս խոսքի ծագումը հաբեթագիտությունը գտել է, նա նշանակում էր և՛ «խոսել», և՛ «գործել», և՛ «շինել»։

Բնականապես հայոց շինարարությունը, հայկական կուլտուրան կամ մշակույթը միևնույն ժամանակ և լեզվի շինարարություն էր, ոչ միայն հայերենի, այլև բոլոր այն ազգերի, որոնք նրա հետ մտերիմ շինաբար հարաբերություններ ունեին։ Ուրեմն մեր հարցը լոկ հայկական ազգային նշանակություն չունի։ Իհարկե, ոչ մի կուլտուրա չի կարող հասկացվել առանց ազգե ցազգ ազդեցության և փոխադարձ արդյունագործության, բայց հայկական կուլտուրան առանձին տեղ է բռնում այս հարցում։ Ազգային հարաբերությունների հանգույցը կազմելով, ոչ միայն ժամանակակից ժողովուրդների մեջ, այլև մեռած կուլտուրական ազգերի և ներկա կենդանի քաղաքակրթված աշխարհի միջև ևս հայերն առաջինն են եղել, որ միջազգայնության շահերը և տիեզերական պատմության ըմբռնումը հասկացել են դեռ միջին դարերում։ Հարցն ուրեմն մեծ է, ոչ միայն մեծ, այլև ծա՜նր. ձեզ, հայերիդ համար ծանրագո՜ւն. բայց դուք, հայերդ, չեք կարող ձեր պատմական դերից երես շուռ տալ և միայն ազգային, անջատ թվող ազգային շահերով բավականանալ։ Ամեն մի մեծ պատմական դեր, ինչպես ամեն մեծ ստեղծական գործ, աշխարհիս միջավայրում տառապանք է. բայց իրապես տառապանքից է, որ ծնվում են մեծ բաները։ Հարյուր երեսուն տարի առաջ ի՜նչ տառապանք չէր կրում Սայաթ-Նովան։ Տանոթացեք նրա կենսագրության հետ։ Բայց ի՞նչ գրավիչ երգեր է երգել։ Ապրելով Վրաստանի թագավորական ընտանիքի շրջանում, այս հայ երգիչն երգում է և՛ հայերեն, և՛ վրացերեն, և՛ տաճկերեն, և՛ պարսկերեն լեզու-

ներով, ստեղծում էր երբեմն միջազգային ոտանավորներ, հայ-վրացերեն, հայ-վրացի-տաճկերեն, հայ-վրացի-տաճիկ-պարսկերեն, գտնելով իր հայկական և՛ ցեղային, և՛ պատմական կուլտուրատիպը բնության մեջ ամեն ցեղի սիրտին մոտ ներդաշնակ եղանակներ, զգացումներ, գաղափարներ և ոչ թե միայն բառեր։

ԺԷ և ԺԸ դարերի եվրոպական պրոպագանդայի հետամուտ հայերն երկու ճակատ պիտի կազմեին, երկուսն էլ շինարար, կուլտուրական. մեկը՝ ազգային առանձնահատկությունները և ինքնուրույն կուլտուրան իր ստեղծագործիչ ուժերով, քաղաքակրթության ազգային ավանդական տարրերով, ազգային լեզվով բարգավաճողը։ Մյուսը՝ համաշխարհային նշանակություն ունեցող եվրոպական լուսավորությունն և նրա կատարելագործված միջոցներն ներմուծանողը։ Հայերը ոչ միայն առաջինն այլև միակն են եղել արևելյան ազգերից, որ եվրոպայի կուլտուրայի յուրացմանը նպաստելու նպատակով գիտական հաստատություններ հիմնել են Եվրոպայում։ Հիշենենք Մխիթարյանների գործը, նկատելով հանդերձ, որ այն շրջանում եկեղեցին է եղել միակ ազգային շահերի մարմնացնող հասարակական կազմակերպությունը։ Հարյուր տարի վերջ էլի հայերն էին լազարյան ճեմարանի հիմնադիրները։

Եվրոպայի այդ լուսավորյալ կեդրոններում, հին թե նոր քաղաքակրթիչ միջավայրերուն մեջ, հայերը չեն թերացել կուլտուրական կապերն ամեցնող բույներ դնել քաղաքակրթության մուտքը դյուրացնելու համար առաջավոր Ասիայի մեջ։ Ինչ և լինեին մերձավոր նպատակներն, այս թե այն կողմից այդպիսի հաստատությունների հիմնադրության օրերին, մեր ուշադրությունը գրավում է այս տեսակ գործերում հայոց ազգի միշտ երևան եկող շինարար հոգին, նոցա նախաձեռնությունն հօգուտ միջազգային կուլտուրական հարաբերությանց բարգավաճման։

Հայերի այս միջազգային շինարար դերն ոչինչ չէ կորցնում այն բանի համար, որ աշխարհակալներ հայ ազգի ուժերը իրանց և կամ տիրապետող խավերի սեփականություն դարձուցած պետությանն էին ծառայեցնում, շնորհունակ ժողովուրդին ենթարկելով անզուսպ բռնության։ Դուք հիշում

էք իհարկե, ինչպես իր աշխարհի առևտրական հարաբերությունները բարվոքելու համար Եվրոպայի հետ, Շահ-Աբասը՝ ամբողջ բարգավաճ գեղեցկաշեն քաղաքը քանդեց, տեղափոխելով Հայաստանից Պարսկաստան, նրա ոչ միայն վաճառականության հմուտ, այլև գեղարվեստական նուրբ ճաշակով օժտված բնակիչներին։

Ամայի տեղ, Արաքսի ափերում, մինչև մեր օրերը մեայն գերեզմանոցի նախշուն քանդակված խաչքարերն են վկայում, նոքա էլ մեծ մասամբ կամ հատ-հատ մյուղենների տարված կամ տասնյակներով ջարդ ու փշուր արված մոտից անցնող խճուղին և երկաթուղու կամուրջը շինելիս։ Իսկ ի՞նչ ասել է խաչքար հայոց ճարտարապետության մեջ։ Ամենազգայուն ժողովրդի բոլոր խավերին, վերին շերտերից մինչև ստորինը. մտերմագույն հիշատակարանը, որի վրա անդրադառնում է աջակային քանդակագործության զարգացման ամեն քայլափոխ և հաճախ զուգված երևան են գալիս հայ ճարտարապետության երկու հոսանքը՝ եկեղեցական և աշխարհական։ Եվ դարձյալ ի՞նչ ասել է խաչքար—հայկական գեղարվեստը բացառիկ կերպով բնորոշող մի «հուշիկ հայրենյաց»։ Հայաստանի հնագույն արձանագիր ճարտարապետական հիշատակարանի չորրորդ այլաձևումը—առաջին՝ նախնադարյան Գեղամա սարերի վրա գտնված քարյա հսկա ձկները, Քրիստոսից չորս-հինգ հազարամյակ առաջ շինված վիշապները, երկրորդ՝ վանա թագավորների տափակ սյուները կամ stèlesները, երրորդ՝ վաղաքրիստոնեական քանդակագործ սյուակերներով զարդարված սյուները, մինչև ժ դարը, և հետո խաչքարերը։

Քաղաքացիական և տնտեսական անցքերը քշում էին տեղից տեղ, աշխարհից աշխարհ այս զարմանալի գեղարվեստորեն և գրականորեն օժտված և կրթիչ ցեղը, որն իր հետ սփռում էր արվեստը, գեղարվեստի ճաշակը և գպրության լույսը, թե՛ հեռու հյուսիս, Լեհաստանի մեջ ոսկերչության արհեստի զարգացման զարկ տալով, թե՛ հեռու հարավ, Եթովպացվոց աշխարհի գրականության շարժման մասնակից դառնալով։ Հայաստանի կից օտարազգի միջավայրերում բնակվելով, նույն տեղերի լեզվով թարգմանում էին նոքա իրանց միջում, արդեն Անիի շրջանից ի վեր ամկացրած

ազգային գրականությունը, որ մուտք էր գործում օտար ազգերի մեջ, մատչելի դառնալով նրանց ամենաստորին դասակարգին։ Հայկական ժողովրդական գիրքերը առաջիններն են իրանց տեսակում, որոնք նպաստել են զանազան ազգերի ժողովրդական գրագետ շեշտերի մտերմացման արաբաբնակ Միջագետքից և ասորիների կողմերից մինչև Կովկասյան լեռները։ Հայկական գեղունի շինարարությունն Անիի անկումից հետո չէր սպառվում և բնիկ Հայաստանում, նախկին ավերումներից վնասված հիշատակարաններն էին նորոգում և նոր շքեղ եկեղեցիներ էին կառուցանում, ի պատասխան նոր հալածանքների՝ հայրենի հողի վրա գեղարվեստի ազնվացնող նմուշներ էին տալիս իրանց բռնակալներին, ամեն ազգի մատչելի ճարտարապետական գիծերի ներդաշնակ երաժշտությամբ։

Բայց ավելի մնայուն, թեպետ և ազգային գնահատության էլ ուշ ստացած կուլտուրական հուշիկներն եղան նույն նրբանաժամների սիրո և տիեզերական թախծության բանաստեղծություններ, միջնադարյան հայ բանաստեղծները։ Որպիսի՛ պարզունակ ստեղծագործություն ամենամոտերն նրբագույն զգայումներով և հազարամյա վերապրումների դառն ու խորագույն իմաստությամբ, ի՞նչ հմայիցուցիչ նրաժիշտներ։ Նրանցից մեկն ինքն իսկ զարմանում է իր խոսքի ներդաշնակության վրա, և իրան այս աշխարհում ներկայացնում է իր երազներում խորասուզված՝ ինչպես խնդազարթ. բայց արդյոք այս աշխարհում այդ տնտակ չէ՞ բոլոր իմաստասերների վիճակը։ Չպիտի զարմանանք, որ Վալերի Բրյուսովի ռուսերեն թարգմանությունը ոչ միայն նպաստել է հայ ազդի գեղարվեստական ճաշակը գնահատելու գործին մոս հասարակության մեջ, այլև մտերմության գաղափարական հիմքն է դրել մարդկության ստեղծագործության ամենաչքնաղ ճղճանում։ Հարգելի Չոպանյանի նոր լույս ածած հիանալի ֆրանսերեն հրատարակությունը զարկ կտա հայերեն բնագրերի ուսումնասիրության։ Սակայն արդյոք մեզ հասած գրվածքներն իսկական բնագրերնե՞ր են։ Բնավ չէ։ Նոքա ժողովրդական աշուղներից, ժողովրդական վիպասաններից ժառանգված ցեղային հազարամյա ավանդի շնորհն են մեր առաջ դնում, ավա՛ղ, բնավ ոչ ամբողջությամբ։

Մի ֆրանսիացի գիտնականի կարծիքով. «Սերը կազմում է և երաժշտությունն արտահայտում է միևնույն սրտանց ձրգտումը դեպի անեզրն, անբավն և անհունը, որին խոսքերը տկար են մարմնացնելու, որին մինչև անգամ մտքի գիտակցություն չի հասնում պարզ և հստակ կերպով զգալու։ Օրկուսն էլ մեր մեջ զարթեցնում են այնպիսի երջանկության գաղափար, որ կյանքի ուժից վեր է նրան իրականացնել և երկուսն էլ մղում են մեր անձնավորության անցավոր և պայմանավոր նեղ սահմաններից ելնելու, մեր մեջ հարուցանում են խոհեր մահվան մասին»[1]։

Հայաստանում երաժշտության զարգացումն և բարձր համարումն երևում է նրանից էլ, որ Կիլիկիայում երգեցողության մասնագետը փիլիսոփայի, այսինքն իմաստասերի, կոչում ուներ։ Բայց մեզ համար առանձին նշանակություն ունի հայկական մինչև անգամ եկեղեցական երգեցողության ինքնուրույնությունը, որի աղբյուրն ի զուր կփնտրեինք հայ ազգի ցեղային ժողովրդական ավանդություններից դուրս։

Սակայն երաժշտության կից անեզրի և անբավի տենչանքի ամենաուժեղ արտահայտիչն էր անխոս արվեստներից ճարտարապետությունը, առանձին հափշտակությամբ փայփայված Հայաստանում։

Մենք իջնում ենք հայոց կուլտուրայի Անիական շրջանը։

Տիեզերական պատմության գաղափարի կանխագուշ ըմբռնող և իրականություն դարձնող հայ հեղինակները զարմանալի ներդաշնակություն են կազմում այս փոքրիկ միջնադարյան գեղեցկաշեն քաղաքի համաշխարհային առևտրի և ընդհանուր մարդկային նշանակություն ունեցող տեղական ոճի հետ։ Այստեղ զարգացած էր և՛ եկեղեցական, և՛ աշխարհական ճարտարապետությունը։ Եկեղեցական ճարտարապետության մեջ մի քանի հոսանք թե ավանդապահ, թե moderne, *թե պատկերազարդ քաղկեդոնական և թե զուտ քարեքանդակ հակաքաղկեդոնիկ։ Բայց ոչ միայն այս քրիստոնեական ճարտարապետության շինությունները, այլև Անիի իսլամական աղոթարանները կրում են մի ինքնուրույնության*

[1] G. Paris. Poèmes et légendes du moyen âge. 1900, p.p. 179-180.

դրոշմ,— հայկական ավելի ևս—Շիրակի հատուկ՝ տեղական։ Մարդ շվարած է մնում եկեղեցիների քանակությունից, ևս ավելի նրանից, որ այս կրոնական շինություններից ոչ մեկը մյուսի նման չէ, ամեն եկեղեցի առանձին տեսակ, առանձին մարմնացած ինքնուրույնություն մինչև իսկ հատակագծի վերամշակման մեջ։ Իսկ ի՞նչ ասեմ շռայլ կամ թե դիտավորյալ համեստ քանդակազարդ զարդարանքների մասին։ Որպիսի՜ ստեղծագործական պտղավետություն։ Ի՞նչ աղբյուրից։ Օտար աշխարհների՞ց։ Ա՛յո՛, մանրամասնությունները։ Նախընթաց շրջանի՞ց։ Բայց նախընթաց դարաշրջանում տիրական էր ավատական ճարտարապետությունը, բոլորովին ուրիշ, ավելի վեհ ոճի ուղղություններ, այլ տեսակ ինքնուրույան հայտարարներ։ Նույնպես անաղբյուր, նույնպես անսպառ ստեղծագործություն, և այս շրջանի զանազան դարերում նորից հրապուրիչ տարբեր մարմնացումներ միևնույն ավատական ճարտարապետության և ճարտարապետության ընկերակից՝ նորից բնաստեղծություն։

Որտեղի՞ց է սրա ինքնուրույնությունը, ասենք—Նարեկացու ինքնուրույնությունը։ Բնավ հույներից չէ։ Ուրեմն ասորիների՞ց, պարսիկների՞ց, թե արաբների՞ց։ Բնավ չէ։

Արաբներից գոնյա պայտաձև կամարնե՞րն են։ Երբե՛ք։ Պայտաձև կամարը Հայաստանում միրապետում է արաբներից առաջ։

Նարեկացին, ինչպես և առհասարակ զուտ եկեղեցական երաժշտությունը, ճարտարապետությունը, հասարակական կազմակերպությունը միշտ իր ինքնուրույնությունը դրոշմակիր, ինչպես և սքանչելի լեզուն։ Բավ է հիշել Աստվածաշունչի թարգմանությունը. և քանի՜ցս, և ի՞նչ տեսա՜կ ոճով, երկու-երեք թարգմանություն։

Կկարծենք թե այս թարգմանությունը գոնյա ինքնուրույն չէ կարող ունենալ։ Ընդհակառակն։ Նախկին հայկական թարգմանությունը, որի նման մենք, եթե բաց առնենք նրա եղբայրակից վրաց ժողովուրդի թարգմանությունն, հայերեն բնագրից կախված, նույն եղանակով կատարված չենք պատահում բնավ ուրիշ քրիստոնյա ազգերի մոտ։ Թարգմա-

նություն և միևնույն ժամանակ հարուստ գանձ հայոց ազգի հեթանոսական վերապրումների, հայ ժողովրդական հեթանոսական անգնահատելի ասացվածքների, որոնք կարգից դուրս ինքնուրույնություն են տալիս Աստվածաշունչ հայերեն թարգմանությանը։ Իհարկե առաջին թարգմանիչներն, ասորերենից և հունարենից անկախ, թե՛ տեքնիկական միջոցները, թե՛ նոր հավատքի ազգային ըմբռնումը ժառանգում են իրանց ժողովրդական հեթանոս քուրմերից և մարգարեներից, որոնք դառնում են քրիստոնյա քահանաներ և վարդապետներ,— այն քուրմերից և մարգարեներից, որոնցից ուրիշ կուլտուրական միջավայրերում «տերվիշ», «չելեբիներ» և մոգեր են ծագել իրանց հատուկ կրոնական շարժումներով և որոնք Արևմըտյան Եվրոպայում մեծ դեր խաղացած կելտական դրուիտների եղբայրակից երևույթն են ներկայացնում։

Զ-Ը դարուց նյութեղեն հիշատակարանների և բանաս ծական արտադրությունների մասին խոսելով, մենք չպիտի մոռանանք այս շրջանի ամենախոշոր և ամենավերացական կոթողը, հայոց ազգի իբրև անհատական ստեղծագործության ամենաերևելի վկան. խոսքս վերաբերում է առանձին կրոնքի, սեփական դավանության ստեղծման գործին։ Մենք կանգ չենք առնի այն բոլոր ամենանուրբ և մանրակրկիտ գիտելիքների և ճշտագույն եղանակների վրա, որոնք անհրաժեշտ և հարկավոր էին այս վեհագույն շինությունն և՛ կառուցանելու, և՛ հազար ու մեկ արտաքին և ներքին հարձակումներից պաշտպանելու համար։ Ի՜նչ իմաստասիրական խորասուզումն Աստուծո գաղափարի յուրովսանն ըմբռնման և այս նպատակին հասնելու համար նրբագույն մտածողության, ի՜նչ ապշեցնող քաջագործություն, ամենակնճռոտ գաղափարների վերահասումը և խոսքերի բախտավոր գյուտը։ Մեզ այս րոպեիս հետաքրքրում է այն մասսայական նյութն և նրանից ծագող ստեղծագործման դրդիչը, որոնք աշխարհի ամբողջ բնակիչներից, չնայելով իրանց ցեղական զանազանության, որոշ շրջանում լինում էին հայերն կրոնի ամենաեռանդուն գործիչներ։ Արդյոք, այդ նյութը և այն դրդիչ հոգին դրսի՞ց էր գալիս։ Ինչ՞վ չէ։ Քրիստոնյա ասորիներից և Բյուզանդիայից բերած նոր գաղափարները և նյութերը պիտի հարմար-

վեին տեղական հեթանոսական ժառանգության, խորագույն կրոնական ձգտումներին և ավանդություններին։

Բնական բան է, որ այն ժողովրդական անսպառ աղբյուրը Հայաստանում ազգային դավանություն ստեղծողը՝ երբ տիրապետող դարձած քրիստոնեության հետ կորցրեց անմիջական շփումն, իր գործունեության համար լայն ասպարեզ գտավ ավելի համակիր ժողովրդական խավերում, ուր նա ստեղծեց մի շարք այսպես ասած աղանդներ և՛ Հայաստանում, և՛ Հայաստանի սահմաններից դուրս։ Այս առաջ աղանդավոր վարդապետություններից, որոնք թանձրախիտ բուսնում էին հայկական հողի վրա, ընդհանուր նշանակություն ստացավ Պավլիկյանությունը։ Անցողակի հիշենք և այն, որ Մանիքյան ուսումի նախկին ձևը, Արքոնտականը, Հայաստանում է ծաղկել դեռ Դ դարում. և Մանիքյան կուլտուրայի տարածումը Միջին Ասիայում ակներև ազգակցություն է ցույց տալիս հայ-վրացական եկեղեցական սասցվածների, եզրների հետ։ Ջեզ հայտնի պիտի լինի, թե ի՞նչ հալածանքների են ենթարկվել տիրապետող ազգային եկեղեցու և ազգային տիրապետող դասակարգի կողմից՝ ութերորդ դարուց մինչև մետասաներորդը՝ նույն ժողովրդական հինավուրց ուսման հետևողները Հայաստանում։ Բավական է Դրիգոր Մագիստրոսի արածները և սասցածները ի նկատի ունենալ։ Նրա և նորա գաղափարակիցների համար այս հալածվածները դատապարտելի աղանդավորներ էին. իսկ իրապես նոքա հուզիչ և դրդիչ, նոր ստեղծագործության կանչող հոգու սերեր էին, և նոցա նախաձեռնությունն երևում է և՛ Հայաստանի սահմաններից դուրս Երևան ելող կրոնական շարժումների մեջ, և՛ քրիստոնեական Եվրոպայում, ուր Բալկանյան թերակղզու վրա այս աղանդավորների ուհադին բանակ էր դաղթեցրած, և՛ իսլամի բաժին դարձած Փոքր Ասիայում դերվիշիզմի զարգացման մեջ։

Հայկական ազդեցությունն նշմարվում է ոչ միայն Փոքր Ասիայի սելջուկյան արվեստի վրա, այլ նրանից առաջ Բյուզանդիայի և առանձին՝ ռուսաց հին ճարտարապետության վրա, կամ ամեն դեպքում, ռուսների հետ միևնույն նախասլատմական շրջանից ժառանգված գեղարվեստական ճաշակը ունեն։

Հայ պատմական կյանքի սկզբնավորությունն միշտ քա-

ղաքներից է, նախ ցեղական առտվածապաշտության տեղերից, հետո վաճառատեղիներից, բայց միշտ ամրոցներից։ Տօսպ-Վան, Արմավիր, Արտաշատ, Դվին, Անի։ Եվ արդյոք այստեղ մենք չէի՞նք կարող նույնպես հայերի ժիր առևտրական և արվեստական գործունեությամբ ստեղծած քաղաքների շարքը շարունակել, անցնելով բուն հայկական հողից արտասահման։ Բայց շարքի այդ մասը թող շարունակեն թվել ինքնաբերաբար այն երախտապարտ ազգերը, որոնք հայոց ազգից այս շինարար ձոնը ստանալ չեն զլացել իր ժամանակին։ Խոսքը մի կամ երկու ազգի մասին հո՞ չէ։ Եվ միևնույն ժամանակ ամենասերտ շփումն բոլոր քաղաքակրթված ազգերի հետ, արաբների, պարսիկների, ասորիների և հույների։ Այս անգամ զանց եմ առնում առանձին պայմաններում կատարված կուլտուրական հարաբերությունները վրացիների հետ։

Ահագին քանակությամբ թարգմանություններ հունարենից, ոչ միայն քրիստոնեական, այլև դասական հունարենից։

Շնորհիվ հայերենի՝ քրիստոնեական գրականության կորած գոհարներից փրկումը։ Ավելի ևս։ Եվրոպայի վայրենացման դարերին հայ ազգը իր թարգմանություններով հունարենից՝ անփոխարինելի ծառայություն է մատուցանում եվրոպական համամարդկային քաղաքակրթությանը, ոչ միայն պահելով դասական գրականության հիշատակարաններն, այլ հունագիտության ամենահեռանդուն ախոյան հանդիսանալով և նպաստելով այն լեզվի ուսումնասիրությանը Արևելքում և մինչև անգամ Հունաստանում։

Այն դարերին Եվրոպայում շատ ընկած էր քաղաքակրթությունը։ Հյուսիսային և կեդրոնական Իտալիայում ավելի բարձր չէր քաղաքակրթության մակարդակը։

Գրիգորիոս Մեծը, պապերից ամենահռչակավորը, որը շատ ուժեղացրեց Հռոմի հայրապետության հիմքերը, բնավ չէր իմանում հունարեն,— կրթության գործի ստորին մակարդակի ամենափայլուն ապացույցը արևմուտքում։ Երկու հարյուր տարի հետո, գիտնական և շնորհունակ սպանացի Claudius, Թորինոյի եպիսկոպոսը, երբ իրան չհավանած պատկերապաշտության մասին սեփական հայեցակետ պիտի

պաշտպաններ իտալական եպիսկոպոսների ժողովի առաջ, այդ իսկ ժողովը նա անվանեց congregatio asinorum (էշերի ժողովակցություն), և պատկերապաշտությունը պաշտպանելու համար կանչվեց իռլանդական միաբան Dungal։ «Երկու գիտնական հակառակորդներ»,— նկատում է այս դեպքի առթիվ Գերմանացի կելտագետ Zimmer, «այսինքն՝ Claudius սպանացի, Dungal իռլանդացի, որոնք պատահեցին միմյանց Լոմբարդիի հողի վրա, ներկայացուցիչներ են այն երկու երկրի որոնք հույն-ռոման (graeco-roman) կրթության միակ ապաստանարան էին, է դարու սկիզբում, երբ այս կրթությունն կոխեց անկման ճանապարհ Արևմուտքում»։

Բայց ինչ որ արևմտյան կողմից անում էին սպանացիք և իռլանդացիք, նույն բանը արևելյան կողմից արած են հայերը և հարևան ասորիները, այստեղ հունագիտական զբաղմունքները հարստացնելով մարդկային մշակույթի թե իրանական, թե զուտ ցեղային կուլտուրական տարրերով։

Նոքա, այս չորս ամենաթունդ հաբեթադրոշմ աշխարհների բնակիչ ազգերը, շրջապատելով Եվրոպայի հին կուլտուրական միջավայրը պահել են նրա քաղաքակրթական ավանդը և ապահովել մարդկության նոր հառաջադիմությունը, իրանց վրա առնելով միջնադարյան խավարացած բարբարոսության դաստիարակումը և նրա բռնակալության ծանրությունը։ Եվ ավելի ծանրաբեռնված արևելյան ախոյաններից՝ ասորիները իրանց կուլտուրական միսիայի զոհ գնացին, անհետ եղան, արապներ դարձած։ Հայերը շարունակեցին կրթիչ դերը, աղնվացնելով ընկճողների ցեղային տիպը իրանց արյունով, և բնչմնավորելով նոցա հասարակական կյանքն իրանց շինարար ձեռքերով։

Հարևան և մինչև անգամ հեռու բնկած ազգերից ո՞րն է, որ օգտված չիններ հայոց ազգի կուլտուրական բարեմասնություններից, վիպասաններից նկող և աշուղներին հասած երգերից, նրա ճարտարապետական աննման զարգացած արվեստից, նրա այն բացառիկ լեզվագիտական շնորհից, որ թարգմանչական արհեստից ավելի արվեստ է— գիտություն և արվեստ միասին ձուլված գեղարվեստ է շինած, հին դարաշրջաններում ստեղծած է թարգմանության մի շարք դրպրոցներ և տեսակ-տեսակ ոճ ինքնուրույն գրվածքների հա-

մար պատրաստի ճոխ գրական լեզու ժառանգելով ժողովրդական վիպասաններից, նոր դարաշրջանում երկու գրական լեզու մշակելով կենդանի բարբառներից: Ի՞նչ աղբյուրից է այդ ինքնուրույնության ուժն և առատ պաշարը, ի՞նչ ցեղից. ի՞նչ լեզվից:

*

Լեզվի ուսումնասիրությունը երկու ճանապարհով ենք վարում. մեկը՝ համեմատական է, մյուսն՝ էաբանական կամ հնաբանական—ontologique կամ paléontologique: Բայց մեր ուսման մեջ այս հնաբանությունը կամ paléontologie ինքնուրույն գոյություն և վավերացման միջոցներ ունի. նա բոլորովին անկախ է բանասիրական լեզվագիտությունից և նրա վրա կերտված համեմատական քերականությունից թե՛ սամությունից, իրան պատկանելի այսպես ասած paléontologique ուսումից, հնաբանությունից: Խոսքս այն բանի մասին չէ, թե հաբեթագետը ուրիշ դրույթյուններ է առաջ բերում լեզվի ծագման կամ նրա մասերի հարաբերության հարցը լուսաբանելիս, ուրիշ տեսակ է ապացուցանում այն դրույթյունների արդարացիությունը: Հաբեթագետը չէ բավականանում, օրինակ, միայն բառերի ազգակցությամբ, թեպետ և ա. ենապարզ կերպով մարմնացրած հանդիսանա այս ազգակցությունն և հնչյունաբանության օրենքների համեմատ. նշանակության կողմից, երկցեղ կամ հնդեվրոպական-հարեբեական լինելով, դարերով և հազար տարիներով մեկ կողմից գրականությունն այս վերապրումների շռնմարան տալով, մյուս կողմից կենդանի բարբառները, մինչև անգամ գրաբարյան կենդանի լեզուներ, ուրեմն անսպառ գանձարան և ստեղծող միջավայր պահելով, հայերեն լեզուն իհարկե ունի ամենահարուստ բառարան, գաղափարների արտահայտման ընտրություն:

Բայց հնդեվրոպական լեզվի հետ խառնվելուց առաջ, հայոց լեզվի զուտ հաբեթական շերտը թեև պարզ բաղադրություն, վայրենի տունկ չէր ներկայացնում. նա արդեն այն զուտ հաբեթական լինելու շրջանում փայփայված, իբրև խնամքով պատրաստված ապնիվ պտղաբեր ծառ, խառնված

կամ բազմիցս խաչաձևած տեսակն էր ներկայացնում: Նրա բարդ պարունակության մեջ ձուլված էին ոչ երկու, այլ մի քանի, հինգից ոչ պակաս զանազան հաբեթական ցեղային լեզուներ: Ահա ինչու հայոց լեզվի մեջ, անկախ հնդեվրոպական շերտից, տեսնում ենք բառերի զարմանալի հարստություն և ձևերի անսահման բնտրություն: Արդեն ինքնուրույն պատմական կուլտուրա ստեղծելով և զարգացնելով, հայոց ազգն այս բառերի հարստությունը գործադրել է ամեն մեկին հատկացնելով նշանակության առանձին երանգ, օրինակ՝ անձն, հոգի և շունչ: Այս րոպեիս չեմ կանգնի այն հարցի վրա, թե ո՞ր մեկն է նրանցից գրաբարից գալիս և ո՞րն աշխարհաբարից: Ձեզ բոլորիդ հայտնի է իհարկե որ անձն գրաբարում նշանակում է ի միջի այլոց «հոգի». և իսկապես այս երեք բառը անձն, հոգի, շունչ, միօրինակ նշանակում էին զուտ հաբեթականների բերանում, «շունչ», դուքա հավասարապես հաբեթական բառեր են, և հիմի գիտենք և այն, թե հաբեթական ցեղին է հատուկ նրանցից ամեն մինը:

Նույն բանը տեսնում ենք և ձևաբանության կամ morphologich մեջ, քերականության մեջ: Հավանական է, որ և [illegible] [illegible]ր առաջվին անտեղյակ եք, որ նաև հայոց լեզվի հոլովու- ո՞ր [illegible] կամենաք հոլովումը, հաբեթական վերապրուկներով լիքն է. դերանուններում էլ նույն երևույթն է նկատվում: Վերցնենք տրական ինձ, քեզ, մեզ. ձեզ ձևերը, որտեղ «զ» հնչյունի մեջ մնացել է տրականի հաբեթական վերջավորության վերապրում — մե-զ, քե-զ, ձե-զ (իսկ ինչ վերաբերում է հնչյունին, նա զայի հաբեթական, իսկ և իսկ ձան-միգրել խմբի հաբեթական հնչյունաբանության օրենքով պահպանված բարձր աստիճանն է ներկայացնում — ին գ, ին-ձ):

Բայց մեր ավելի բարդ կարծիքը լուսաբանելու համար վերցնենք, օրինակ, հոգնակի վերջավորություններ — եար-եր, ք, ց: Այս անգամ էլ ավելորդ է մատնանիշ անել: Ձեզ հայտնի պիտի լինի թե նրանցից ո՞րը գրաբարին է հատուկ և ո՞րը աշխարհաբարին: Միայն հիշեցնեմ, որ ք (q) և ց (ts) հնչյունները գրաբարում ոչ լոկ հոգնականի հատկանիշ են,

այլև հոլովակերտ մասնիկներ են մի շարք հոլովներում, ք ուղղականի համար և ց ամբողջ մի խումբի,— սեռականի, տրականի և բացառականի։

Հավասար հետաքրքրական երևույթ՝ հոլովների նույն տեսակ դասավորումը երևան է գալիս ի միջի այլոց վրացերեն գրաբարում, ուր մեկ կողմից դասվում է ուղղական հոլովը, մյուս կողմից՝ սեռական, տրական և բացառական, և վերջին հոլովներիս խումբը ներկայացնում է նույն հայերենի հոլովակերպի տեսակ բ (b)։ Ավելի ուշագրավ երևույթ է ներկայացնում արդեն հայտնի և լուսաբանված բանը ափխազերենում։ Ջնայելով որ նա զուրկ է հոլովումից, չունի զանազան հոլովների ձևերը, ափխազերենը նույնպես երկու տեսակ հոգնակի է կազմում գրաբարից ծանոթ q (ք) և ts (ց) հնչյուններով, բայց բնույթով ավելի սկզբնական լինելով, մարդկության նախապատմական մտավորականության հետ ավելի մտերմություն բացահայտելով, ափխազերենն այդ երկու տեսակ հոգնականի բնորոշ հնչյունները բաժանում է ըստ առարկաներին բնական տեսակին. ts (ց) հնչյուն հատկացնում է բանավոր կամ զգոն, խելքով օժտված էություն արտահայտող բառերին, իսկ q(ք) հնչյունը խելքից զուրկ՝ շնչավոր թե անշունչ առարկաներ արտահայտող խոսքերին։

Էթնանական հետազոտությունն երևան հանեց, որ ինչպես առաջ բերված անձն, ճոգի և շունչ բնավ չէին նշանակում զանազան առարկաներ այլ միևնույն բան, այսպես և միևնույն իմաստ տալու խոսքերին, լոկ բազմության իմաստը արտահայտելուն ծառայում էին հայերենում, մանավանդ գրաբարում առանձին դեր ստացած ք (q) և ց (ts) հնչյունները, ինչպես և էր, առաջ՝ եար եղած վերջավորությունը, բայց այսպիսի primitif *գործածության ցպատմական շրջանում, նոքա պատկանելիս են եղել երեք զանազան ցեղի, հաբեթական ընտանիքի երեք զանազան ցեղային խմբավորմանը։*

Երեք հատիկ բառեր կամ բառակազմության տարրեր ձեր ուշադրության առաջ դնելով, մենք ի նկատի ենք ունեցել երևույթի ըմբռնումը դյուրացնել։ Այդ փոքրաթիվ տեսակներից բնավ չէ հարկավոր եզրակացնել, որ հայոց ազգի հաբեթական մասը միայն եռացեղ բաղադրություն էր ներ-

կայացնում, որ նրա բնականորեն ժառանգված համապատասխան կազմության մեջ միայն երեք նախապատմական ցեղային լեզուների շերտեր են եղել արտադրված։ Ընդհակառակն, հաբեթական մասը երեքից իհարկե ավելի հիմնական շերտերով է բնորոշվում, և իսկապես այդ ակներև եղելությունն է, որ զարկ տվավ հաբեթական լեզվագիտության համեմատական եղանակի ինքնուրույն կազմակերպության։ Ուսումնասիրելով հայերեն լեզուն, դիցուք միայն գրաբարը իր ամբողջության մեջ, մենք համեմատում ենք նրա բաղադիր զանազան շերտերը ուրիշ ազգակից լեզուների համապատասխան շերտերի հետ, որովհետև գոքա էլ, այդ ուրիշ ազգակից լեզուները բարդ բաղադրություն դարձած և լինում պատմական ժամանակից առաջ, դեռ ցպատմական շրջանում։ Ջուտ չխաչաձևված՝ չխառնված մարդավարի լեզու առհասարակ աշխարհի երեսի վրա չկա և չէ եղել. այդ գիտնական ռոմանտիկ աշխարհահայեցողության արդյունք է։ Բնականաբար երբ մենք, օրինակի համար, հայերենի մեջ մատնացույց արված հոգնականի հաբեթական նշանները փնտրում ենք ուրիշ տեղերի հաբեթական լեզուների մեջ, իհարկե մենք ամենուրեք չենք վավերացնում նրանց գոյությունը, նույնպիսի խմբակցությամբ, ի նկատի ունենալով որ նրանց տարածումն և ջոկ-ջոկ կամ միասին երևան գալը կախված էր համապատասխան ցեղային շերտերի դասավորումից։ Հայերեն հոգնակի ե-ար (ear) վերջավորության հատկանիշը գտնում ենք հավաստիորեն եորուսկերենում, բայց այս հանդիպությունը դեռ ոչինչ չէ հաստատում, ամեն դեպքում բնավ չէ որոշում վերջավորության ծագումն։ Որպեսզի իմանանք, թե իսկապես որ ցեղին է ի բնե պատկանելիս եղել «ր» հնչյունով կազմված հոգնակին, հարկավոր է գտնել եորուսկերենի և հայերենի մեջ այդ հնչյունը ներմուծող ցեղային շերտը։ Հայերեն հոգնակի ք (q) վերջավորությունը գտնում ենք բասկերենում, բայց բասկերենը նույնպես բարդ, բաղադրված ամբողջություն լինելով, մի քանի ցեղային լեզուների խառնուրդ ներկայացնելով, առանձին հետազոտություն է պահանջվում, որ այն կազմակերպիչ նշանի բնիկ հեղինակ-ցեղն որոշվի. և կնճռոտ հարցի լուծման եղանակը գտնված է։

Այնպիսի հեռու ընկած լեզուների ազգակցություն, ինչպես, օրինակ բասկերեն և հայերեն լեզուներն են, մեզ իհարկե տանում է մարդկության գոյության նախնական շրջանները, որոնք հետզհետե մարդու ծագումից հետո տևել են յուրաքանչյուրը տասնյակ հազար տարիներ, և լեզվի մեջ առաջ են բերել այնպիսի խոր հեղաշրջումներ, որ նրանց մասին տիրապետող լեզվագիտությունը իր էվոլյուտիվ զարգացման, աստիճանե աստիճան բարեշրջման եղանակով գաղափար չունի։ Հետագայում կազմակերպված տեսակներով հին եվրոպական լեզուների ընտանիքը չուներ էլ բնական հատկություններ այն, ներեցեք խոսքիս, հորեշրջան երևույթները խաչաձևումից առաջ բերված հեղաշրջումները, արմատական փոփոխությունները նշմարել և բացատրել։

Հաբեթական լեզուները մարդկության արշալույսի ստեղծագործության իրանց հարուստ վերապրումներով, անսպասելի, երբեմն շվարեցնող հինավուրցության. զանազան բոլորոշ շրջաններից, շոշափելի վկայություններով բացեիբաց լայն ճանապարհ են կերտում մեր առաջ ոչ միայն հունարենի ծագման համեմատաբար նորագույն երևույթի, օրերը ծածկող պատը ծակել և Եգիպտոսի կամ Միջագետքի կուլտուրական կյանքի անվերջ երևող դարերի կուտակումը թափանցել, այլև նշմարել նրանցից դեն ժամանակի անվերջ, կարծես անսահման տարածության լեզվաստեղծական մի շարք դարե շրջաններ, ամեն մեկն իրան պատկանելի հնապատկերով։ Եվ այս ուսումնասիրության մեջ հայոց լեզվի, ուղիղ ասենք՝ հայոց առնվազ երկու ինքնուրույն, այսպես ասած գրաբար և աշխարհաբար լեզուների հաբեթական շերտերի մեջ հազվագյուտ վերապրումների ամբարանոց ունենք։ Նրանց միջոցով հայոց ազգը սերտագույն հոգեբանական կապերով միացած է հանդիսանում ոչ միայն հաբեթականների այժմ ցրված զանազան, հնուց մնացած մեզ ժամանակակից ժողովուրդների հետ, այլև ամբողջ կուլտուրական մարդկության, Եվրոպայի միջերկրյա մարդկության արմատական շերտի հետ, մարդկային խոսքի ծագման օրերից։ Եվ այս հնագույն շրջանները լուսաբանելիս, մի կարծեք, որ միայն գրաբարն է, որ մեզ կարևոր փաստեր է տալիս։ Ո՛չ։ Նույն հարցի համար արդյունավետ պաշարք են տալիս և մինչև

մեր օրերը կենդանի հասած աշխարհաբարը և նորա բազմաթիվ կենդանի բարբառները, շատ անգամ իսկ և իսկ նա է միայն տվողը։

Մի օրինակ հոլովումից։ Հոլովումն երկու կերպ էր գոյացել հաբեթական լեզուների մեջ. մեկը դերանունների միջոցով. ցո. Թեպետ պիտի նախազգուշացնեմ, որ դերանուններն էլ առաջ անուններ են եղել։ Առհասարակ դերանունների նույնիսկ փոխադարձ հարաբերության համակարգությունը (systéme) հետո է մշակվել, իբրև դերանունների գործածված խոսքերի իսկական նշանակության հակառակ։ Իսկ մյուս հոլովումը, մանավանդ սեռականում, հաբեթյանները մշակել են բոլորովին բնական կերպով, իբրև նշան գործածելով «որդի» բառը։ Ձեզ հայտնի պիտի լինի և թվանշանների անունների մեջ—դասական թվերը ածական թվանշաններն են. նրանց ածանցման համար գործածված մասնիկը— որդ—օրինակ. հինգերորդ, վեցերորդ, նույն «որդու» իմաստ ունեցող, մինչև անգամ նույն «որդի» բառն ենք և այսօր տեսնում։ Բայց հաբեթական լեզուներում «որդու» նշանակություն ունեցող բառեր շատ էին, կարող ենք ասել այնքան, որքան այս նախամարդկային ընտանիքի գլխավոր նախնական ցեղերն են եղել։ Եվ մենք արդեն տեսանք, որ հոգնական կազմելու համար նույնպես «որդու» իմաստ ունեցող բառ էր գործածվում, և օրինակ գրաբար հայերենում հոգնական կազմող ք (q) հնչյունը մնացորդ է, մի տեսակ վերապրումն է որոշ հաբեթական ցեղի խին (qin) բառի, որը մինչև պատմական ժամանակ պահվել է Հայաստանի հողի վրա. և իսկ այս բառն է, որ Վանա բևեռագիր արձանագրությանց հաբեթական լեզվի մեջ տեսնում ենք խին-ի (qini) երբեմն խի (qi) բառ «որդու» նշանակությամբ[1]։

Բայց նույն «որդու» իմաստ արտահայտող խոսքերից մեկն էլ ման կամ վան բառն է, որը պատկանելի ցեղային լեզվի մեջ մի կողմից ծառայում է հոգնականի կազմակերպության, օրինակ՝ ազգերի անուններ՝ Գարդ-ման-եք, Աղվան Al-van ևն. մյուս կողմից նույն վան մասնիկով նախնական

[1] Թեպետ նմանից, սակայն ուրիշ ծագումն ունի -ko և -kon և այլն։

հոլովման մեջ սեռական էր կազմվում. և այս նախապատմական երևույթի վերապրումներից աշխարհաբար հայերենի բարբառներում մնացած սեռականի այսպիսի դեպքեր են, ինչպես «տար-վան» «ձմեռ-վան», «առավոտ-վան» են։ Եվ հիմի հասկանալի է դառնում, թե ինչո՞ւ բասկերենում, հաբեթական լեզուների մնացորդում՝ Սպանիայի և Գալլիայի սահմանագլխում ko>go մասնիկ հանդիսանում իբրև սեռականի, առհասարակ բնորոշող ածականների, վերջավորություն, նա էլ հաբեթական լեզուների որոշ կոկորդաձայն խմբում նախնական ձևով -ko «որդի» է նշանակում, և մինչև այսօր պահվել է կովկասու լեռնացիների՝ չերքեզների և ափխազների մեջ, թե ko ձևը պահած, kwa ձևը ստացած «որդու» նշանակությամբ կամ իբրև անկախ հասարակ անուն կամ իբրև ազգականների վերջավորություն։ Մասնավորապես ափխազ—չերքեզ—բասկերեն «որդի» նշանակող և սեռական կազմող բառ և մասնիկը կարևոր դեր է խաղացել երբեմն, նախապատմական շրջանում, սկյութ և լիգուրների հարևանական ցեղերով բռնված հարավային Եվրոպայի տարածության վրա, Դոն գետից սկսելով մինչև Սպանիայի սահմանագլուխը, ուրեմն լիգուրական և սկյութական ձևերի ամենամոտիկ կրկնապատկեր ներկայացնելով, տակավին խոսս տալով նրա երկար պատմությունից, առանձին պատճառ ունեմ, այսօրվա դասախոսության տեսակետից մատնանիշ անելու նրա շատ հավանական վերապրումի վրա սլավոներեն լեզվի, մասնավորապես ռուսերենի մեջ։ Ի նկատի ունեմ իսկ և իսկ ածականներում սեռականի վերջավորություն ռուսերեն-go, որի բավարար բացատրությունը ի դուր են փնտրում սլավոնագետներն մինչև այսօր։

Բայց այս րոպեիս մեզ հետաքրքրում է ոչ այս թե այն բառը դիցուք հաբեթական, այլ ձևաբանության որոշ տիպարը, սեռականի նույն տեսակ կազմումը մարդկության նախնական շրջաններից ժառանգվածն և հայերենի և բասկերենի մեջ անցած հաբեթական որոշ շերտի, որոշ հաբեթական ցեղային լեզվի միջոցով։

Թվականները հիմի բոլորովին վերացական գաղափարներ են ներկայացնում, իսկ ցպատմական դարերին թվերի գաղափարը ըմբռնվում էին նրանց պատկերացնող առարկա-

ների միջոցով, իհարկե այն շրջաններում մարդն առարկա-
ների մասին էլ ուրիշ տեսակ գաղափար ուներ։ Օրինակ մի շարք վերապրած նյութերից մենք տեսնում ենք, որ «գլուխ», «լեռ» կամ «սար», և «երկինք» արտահայտվում էին միևնույն խոսքով։ Եվ այն ամենահին դարերին և՛ «երկինք»-ը, և՛ «գլուխ»-ը ներկայացնում էին, ինչպես «սար»-ը, սրածայր՝ երկու շեղ կողքերով հիմքի վրա, հետևապես եռանկյուն։ Եվ իսկապես այս առարկաներ նշանակող խոսքը դարձել է «երեք» թվի արտահայտող, միայն մինչդեռ հաբեթական լեզուների մեծամասնություն երեք թվի համար օգտվել է «sam» բառից և նրա բազմաթիվ ցեղային առանձնատեսակ փոփոխումներից, հայերեն և բասկերեն գործածվել է նույնպես «գլուխ», «սար» և «երկինք» նշանակող ուրիշ հաբեթական բառ, ter || her կամ ծիր || her, որից հոգնակի ձևով բասկերեն heru (r՛) և հայերեն հոգնակի er-eq թե ir-eq եզակի եռ- (և her-hir-)։ Ես լավ գիտեմ որ հայերեն թիվ «երեք» ածանցում են հնդեվրոպականից լատ. tre ևն, նրա տարբեր ձևերից. սակայն թվականներ հնդեվրոպացիներից ստեղծված բան չեն։ Հնդեվրոպացիք թվականները ստացել են հաբեթուզներից իբրև պատրաստի կուլտուրական պայմանավոր բառեր, եզրներ։

Այս թվականի կրկնապատկեր «ծիր» և «ծեր» պահվել են հայերենում «ծիր» ձևով, բայց վաղուց արդեն հայերն «երկինք»-ի իմաստով չեն գործածում նույն բառի այս առանձնատեսակ ցեղային արտասանությունը «ծիր»-ը։ Վաղուց արդեն այս խոսքը ինչպես և նրա ուրիշ տեսակ tre վրացերենում, նշանակում է «բոլորակ», «կլոր գիծ», «երկինք»-ի մասին հետագա դարերում ստացած գաղափարի համեմատ, բայց բասկերենում նրա համապատասխանող բառ հոգնակի ձևով—ser-u(r) մինչև այսօր պահվել է երկինքի նշանակությամբ։

Հայերենը և բասկերենը ոչ միայն առանձին սերտ ազգակցություն ունին միմյանց հետ, հաբեթական նյութի մասում, այլ պահում են մի երկար շարք նույնությամբ մնացած բառեր, ինչպես «քար», har-i>kar-i, id. գարի-gari (froment), այս «հոգի» ays-e («aize»), կայծ կայծ-ակ նշանակությամբ, e-kayz («e-kaitz») (tempete), (orage), ազդր,

ազդեր (cuisse) -i- ster id: գեղ; առաջ gaym, գարշ բառից ածանցվող gaym id. չար ածական—cap («char») են են:

Հաբեթական հնչյունաբանության օրենքների համաձայն կատարվող փոփոխություններով, այս տեղ չեմ կարող զբաղվել, մինչև անգամ կանգ չեմ առնում այն դիպքի վրա, երբ «ս» հնչյունը օրենապատշաճ ելևէջներ է կատարում (ս) իբրև շարքում դառնալով s թե կատարելով ն առաջ բինյացք, օրինակ, երբ հայերենի «սուրբ» հարևան հաբեթական լեզվի, վրացերենի մեջ, հանդիսանում է t'rpli- (արդար) նշանակող trph-el ածականի հիմքը: Մի շարք ցեղային լեզուներից խաչաձևված լինելով, ինքն հայերենը, հաբեթական մասը պարունակում է միևնույն իմաստի տարբեր այլակերպված ըստ պատշաճյալ ցեղերի արտասանության, օրինակ, սուրբ ածականի հիմք սուր հանդիսանում է բուն կոկորդախոս ցեղի արտասանության խոր— «սուրբ» ածականի աշխարհաբար համանիշ մա նախադաս մասնիկով ածանցած բառում—ի նիւտիունիմ մախուր (<magor) ածականն, մինչդեռ բասկերենի համապատասխան շերտը նույնությամբ է կրկնում sur-(||zur) հիմք «սպիտակ» ածականի նշանակությամբ գրում է (zur-i || «churi»), բնականապես բասկերենի մյուս, կոկորդածայն, շերտը ձեղ տալիս է խոսքեռց հնչյունով s < z հնչյունների փոխարեն հայերենի մի շարք խոսքերում, ինչպես սուրբ, հաց, դառն եև gard-i<gv.arb-i «մաքուր», (h) ege «հաց», gar-ad «դառն»:

Բասկերենում պահվել են հայերենի հաբեթածագ մասի այնպիսի բնորոշ զուգաձև բայերի հիմքեր, ինչպիսիք են իջանել թե իջնել «առնուլ» աշխարհաբար, «առնել», այսինքն «աննել», կարել, այսինքն, «կարող լինել» պահվել նույնպես թե իբրև բայեր (ya. d-i e-d, իջանել, ar-tu || ar. n-u «առնուլ»), թե իբրև անուններ (||har hal. (ձև ոք), ml-de, o-hal են:

Հայերի լեզվի մեջ պահած հաբեթական վերապրումները, բնրականության կողմից էլ, սերտ ազգակցություն են ցույց տալիս մանավանդ հոլովման մեջ, ևս առավել դերանունների ավելի անաղարտ մնացած հոլովման մեջ: Պարզվում է և գրաբար հայերենում հասարակ անունների այն հատկությունը, որ նոցա հիմերը մեծ մասամբ որոշ ձայնավորներով են վերջանում: Սակայն բասկերենի և հայերենի, իրանց հաբե-

թական մասում. բազմատեսակ ազգակցությունն այս բոլ պեկիս մեզ համար ուշագրավ է ոչ նոցա սերտ կապակցության կողմից։ Միմյանցից այնքան հեռու ընկած երկու ազգերի, բասկերի և հայերի, դեռ նոր երևան եկող լեզվական-կապերը մեր առաջ բաց են անում նրանց ցեղական կազմի շերտերի անչափելի անհասանելի հեռանկարը։ Թողնենք մի քանի հազար տարի այն ժամանակից, երբ հայ ազգն արդեն պատմական տիեզերական մրցման ասպարեզումն է։ Բայց քանի՜, քանի՜ հազարամյակներով պիտի չափենք այն ժամանակամիջոցը որի ընթացքում կազմվել է հայերեն բարդ տիպարի լեզուն երկու ընտանիքի, հնդեվրոպականի և հաբեթականի, խաչաձևումից։ Իսկ այն ժամանակամիջոցը քանի անգամ ավելի մեծ պիտի թվա, երբ տեսնում ենք որ նույն խաչաձևման գործողության ենթարկվել է Հայաստանից մինչև Պիրենյան թերակղզին ամբողջ միջերկրային տարածություն բռնող երբեմն զուտ հաբեթական բազմացեղ ազգաբնակությունը. և ուրեմն նույն ժամանակամիջոցումն է, որ գոյացել են խաչաձևված տիպարի այնքան կատարյալ տեսակներ. ի միջի այլոց դասական լեզուները, հունարենն ու լատիներենը, որ մինչև այսօր պահում են, գիտնականների աչքում միապաղաղ պարզ բնություն ունեցող լեզուների համարումը։ Մինչդեռ դոքա էլ խառնուրդ երկբունակ (hylvide) լեզուներ են և, օրինակի համար, հունարենում բացի մի շարք ձևաբանական երևույթներից այնպիսի հասարակ բառեր ինչպես ψυχή «հոգի», αδελφός «եղբայր», θάλασσα կամ πόντος «ծով», զուտ հաբեթածագ բառեր են։ Հունաստանի ասավածների հերոսների մանավանդ բազմաթիվ չեն տեղերի, գետերի, լեռների անունները հաբեթական են։

Բայց այս երկարաձիգ ժամանակամիջոցից առաջ պետք է ենթադրել, որ նույն միջավայրում անցել էր մյուս առ առավել երկար ժամանակամիջոց, որի ընթացքում կազմվել են նույնպես խաչաձևումից, պարզ ցեղային լեզուների խաչաձևումից, այնպիսի բարդ տիպարի տեսակներ, ինչպես բասկերեն լեզուն է և հայերենի հաբեթական մասը։ Հայերենի և բասկերենի բաղադրող շերտերն բնորոշելու համար մեզ նեցուկ են ծառայում հայ և բասկ ազգերի և՛ Հայաստանում, և՛

Պիրենյան թերակղզում նղած հաբեթական ազգերի անուններն, որոնք նույնությամբ կրկնված են։

Հաշվի պիտի առնենք նաև ուրույն կյանքի անցյալ նույնպես երկարաձիգ երեք դարե շրջանները, որոնք բնորոշվում են լեզվի ձևաբանության հեղաշրջումներով, հառաջ բերելով համադրական (syntétique), շարակցական (agglutinantes), հանգավոր կամ հանգափոխ (flective) լեզուների տիպարները։

Անհուն ժամանակ և անչափ տարածություն։ Իհարկե ժամանակը և տարածությունը մարդկային լեզվի զարգացումը մղող հատուկ գործոններ են, և ոչ աննշան հանգամանք։

Հասկանալի է, որ հաբեթական լեզուների վերապրումները մեզ միջոց են տալիս վերականգնել մի լեզու, որ ավելի վաղեմի, ավելի սկզբնական լեզվի տիպար է քան ժամանակակից ամենավայրենի մեր ցեղերի լեզուները։ Երբ արցունք նշանակող խոսքերը՝ դուրս է գալիս որ՝ բարդ բառեր են եղել և նշանակել են «աչքի ջուր», սրանով հաբեթական լեզուներն վկայում են, որ երբեմն նոքա եղել են զարգացման նույն մակարդակի վրա, ինչ որ Ամերիկայի բնիկ ցեղերը. ո՛չ ավելի։ Նույնպես երբ «արև» կամ «լուսին» ասելու համար գործ էին անում, ըստ հաբեթական վերապրումների՝ «աչք» նշանակող խոսքեր։ Սակայն հաբեթական լեզվագիտության միջոցներն անհամեմատ ավելի խոր, ավելի սկզբնական կետերին են տանում։ Լեզվի մանրակրկիտ հետազոտությամբ մենք հասնում ենք այն նախնական վայրկյանին, երբ ցեղ և լեզու միևնույն երևույթ էին ներկայացնում. լեզուն բնական ինքնաբեր ստեղծող արտադրություն էր ցեղի. ցեղի շրջանից դուրս մարդու ինքնաճանաչություն չկար. անհատական գոյության մասին մարդ դեռ գաղափար չուներ. չէին ասում՝ «ես» և «դու» այլ՝ «մենք» և «դուք»... «Մենք» էլ չէին հասկանում երբեք ցեղից դուրս գոյություն ունեցող էակ, մենք— հետևաբար «մեր ցեղը»։

Բայց այս իրական և ցեղորոշ լեզվի վերլուծումը մեզ մոտեցնելով դուռ՝ բնությունից բխող ստեղծագործության, տանում է նույնպես դեպի աբյունի և նրա շաղկապի վրա կանգնուն բնական համայնքը, որի ինքնաբեր արտադրություն է հանդիսանում և լեզվի ձևաբանությունը։ Ոչ միայն վերջա-

վորություններն և նախադաս մասնիկները, préfix-ներ, այլ և նախադասության շաղկապներն ներկայացնում են ցեղային համայնական կազմության հատուկ բառեր, եզրներ։ Մենք որդեն առիթ ենք ունեցել բացատրելու թե սեռական հոլով կազմելու համար «որդի» բառն էր գործածվում։ Այս տեղ հիշեմ, որ «և» շաղկապը այն դարաշրջանի մարդիկը արտահայտում էին «եղբայր» նշանակող բառով, օրինակ «որսորդ և շուն» ասել է՝ «որսորդ եղբայր շուն»։ Հայերեն «և»-ը նույն նշանակությունն է ունեցել, հաբեթական ապիրանտ տիպարի լեզվից ժառանգված լինելով նրա հնատիպ «և հւ»-ն է։

Բայց լեզվի ստեղծագործության էլի ավելի խորունկ, ավելի կանուխ շրջան է բացվում մեր առաջ և ցեղային տնտեսական դարերից, երբ ցեղը իրան նույնացնում էր նվիրական առարկաների հետ և դեռ ցեղը չգոյացած ժամանակներից, իսկ մի քանի սկզբնական շրջաններ մեզ հասցնում են մինչև paléolithe կամ հնաքարյա մարդու կեցության դարերը։ Հայերեն հաբեթական մասը առաջնակարգ և ավելի պարզ երևող նշանակություն ունի néolithe-ի նորաքարյա կուլտուրայի դարից։

Այս ժամանակից են հայերենում պահված հացահատիկների անունները՝ գարի, ցորեան, հաց, ինչպես և գինի և այգի, նաև կենդանիների անունները՝ եզ, ցուլ, ձի, երիվար, ջորի, էշ, շուն են ևն։ Իհարկե, նույն ժամանակից են ևս մետաղների անունները՝ ոսկի, արծաթ, պղինձ (որ նույն բառն է ինչ որ bronze), երկաթ ևն։

Այս շրջանից են քաղաքացիություն ստացել երկին և երկիր բառերը, որոնք միևնույն երկաթ՝ նշանակող խոսքի երկու տարբեր ձևեր են ներկայացնում և այս շրջանում հասկացվում էին իբրև, հաստատություն վերին (երկին) և, հաստատություն վարին (երկիր)։ Նույն նորաքարյա դարից ժառանգված են մեծ մասամբ դյութության կամ մոգության վերաբերող բառերը։ Ամեն դեպքում նոքա հաբեթական ծագում ունեն, ի թիվս որոց և մարգարե բառացի «աստղագետ», «կարապետ» նաև սարմատների «Armenii» հայազգի, տնտեսական թե արամյան ցեղի չաստված[1], հետո, քրիստո-

[1] *Կարապետ* բառի տարբեր շշակյան ցեղական ձևը ներկայացնողն է սվաներենում պահված—*ծարմաթ խոսքը* «աստված», վրացերենում «կղա-

նեուիյան ժամանակը Հովհաննես Մկրտչի անուն դարձած, և աստված կամ աստված, որսորդության չաստված. որին նվիրված էր, դեռ կռապաշտական ժամանակներում, «առաջավորաց պասը» պաս մսի, իհարկե՝ որսի մսի:

Իհարկե կռապաշտական աստվածների հետ հայոց ազգը հաբեթական ընտանիքից հետը բերել էր իբրև ժառանգություն իր դարմանալի վիպասանությունը, թևավոր և հաս ու կոտոր մեզ հասած, օրինակ վիշապազունների վերաբերյալ մասը, հնեզերական նշանակություն ունեցող, ալա՛ղ, փոքրաթիվ տողեր խորենացու մոտ: Հեքիա՞թ, առասպե՞լ, այդպես չէ՝ բայց պատմագրի անախորժությամբ հիշված ժողովրդական առասպելները վիշապների և վիշապազունների մասին քսաներորդ դարում բոլորովին նոր գնահատում է ստանում սույն րոպեից, երբ Գեղամա լեռների վրա վիշապների կամ հսկա ձկների արձաններն են հայտնվել, հիշատակարաններ առնվազն հինգերորդ հազարամյակի Քրիստոսից առաջ: Ինք վիշապ «վեշ» կամ «ավշ» աստծու հաբեթական հոգնակի ձևը, բազմաթիվ տեղեր ուներ Հայաստանում, ի միջի որոնց և Օշականն, նվիրական մնացած և քրիստոնեության ժամանակը: Այս վիշապի բազմաթիվ վերապրումները վանի թագավորությունից մինչև մեր օրերը անսպառ նյութ են ներկայացնում հետազոտության համար Հայաստանի և Վրաստանի հողի վրա, ամբողջ Կովկասում և նրա սահմաններից դես ու դեն, հյուսիսում էլ:

Վիշապապաշտ ցեղի ներկայացուցիչ հերոսը մասնակցում է այն երեք հոգուց կազմված եղբայրակցության, որի շինարարության մասին Վանա ծովի մոտ մեզ թանկագին առասպել է պատմում Զենոբ Գլակը: Տարոնում, այնտեղ ուր առաջ Վիշապ քաղաքն է եղել Կուարս քաղաքն են շինում երեք հերոսները՝ Կուար, Միլե և Խորեան: Առասպելը ծագում է սկյութական ավանդություններից, և նույն առասպելի մի ուրիշ ձևը ռուսները իրանց հնագույն քաղաքի Կիևի հիմնադրությանն են հարմարեցրել: Ի նկատի ունենք ռուս տարեդիրքի

պաշտի» նշանակությամբ և ծարմարթ աղավաղած արտասանությամբ: Ավելի մանրամասն հետինակիս մանր հոդվածներում լուսաբանված է:

մեջ ներմուծած հայանի առասպելը Կրի, Շլիկ և Խորիվ եղբայրների մասին։ Սկյութ ցեղը նախնորեն հարեթական, վերապրելով իր ավանդությունները հայերի և ռուսների մեջ, որոնց հետ նա էլ ձուլված է, երկու տեղն էլ թողել է միևնույն նախապատմական ցեղային ավանդության երկու տարբեր խմբագրություններ։ Նկատի ունենք, սկյութական կուլտուրան ամենաերևելի հիշատակարաններն է մեզ թողել, ինչ հարավային Ռուսաստանի պեղումները ցույց տվին։

Բայց մեզ հասել են և ավելի հին դարուց ի վեր մնացած հարեթական վեպի ժառանգության հատիկ գոհարները՝ սիրահար անձանց պատմությունը, որոնք երբեմն բնության տարրերի մարմնացումներն են եղել։ Այս սիրո վեպը մեզ բերում է մինչև այսօրվա Փարիզի բեմի վրա եղելություն դարձած Tristan և Iseult-ի նոր ձևը։ Արևելքում պարսկական սիրային պատմությունը wisa և kamin, որի վրացական հին թարգմանությունը ևս մնացել է և Արևմուտքում Tristan et Iseult վիպասանությունը, երկուսն էլ տեղական աղգաբնակության հարեթական խավերիցն են բխում։

Մեր խոսքը ոչ թե նմանության մասին է, այլ ծագման։ Հարեթական ցեղային տարրերի հետ նա տարածված է եղել ամեն տեղ, Միջին Ասիայից մինչև Բրիտանական կղզիները, իհարկե և հարեթազունների հետ առանձին սերտ կապ ունեցող Կելտերի մեջն ևս։ Բայց այս վեպն որոշ հարեթական ցեղերի totem-ական ստեղծագործության արտադրություն է, պլխավորապես երկու որոշ ցեղերի, «եարուսկ» կամ «պելասո», և «Քնասալ» կամ «իտալ» ցեղերի։ Իսկ «եարուսկներն» կամ «պելասգները» նույնն են, ինչ որ «ուրարտու» կամ «ուշտունի» ինչպես «Քնասալական» և «իտալական» ցեղերը նույն, ինչ որ «ալ» —կամ «աղ» հոպնակի Ալ-ուան կամ Ալ-ան։

Մեր վեպը բնիկ է եղել ամեն միջավայրում, ուր քաոսների կամ մարդերի կից հանդիպել են «եարուսկ» և «իտալ» հարեթական ցեղերը, սրևմն և Արևելյան միջերկրյայի «եարուսկ» և «իտալ» ցեղերի, այսինքն պելասգների և Քնասալների ստանններում, և Կովկասի «եարուսկ» և «իտալ» հարեթական ցեղերի, այսինքն՝ Ուրարտու-Ռշտիկների և Ալվանների միջավայրում—Հայաստանում, ուր նույն վեպի բնիկորներից

և Շամիրամա և Արայի առասպելները շունառալեզներով հանդերձ, մինչև անգամ «Ուլունք Շամիրամայ ի ծով» առածը նույն վիպասանությունից է և Սաթենիկի, Ալանաց օրիորդի առասպելն իսկ և իսկ արև պատկերացնող Tristan-ին է վերաբերում հայտնի կտորը՝

Երկներ երկիր և երկին,
Երկներ և ծիրանի ծով.

Գետը, ծովը, ջուրը—վիպասանության բնական վայրն է, որովհետև, ինչպես Tristan, հորուսների totem—աստված լինելով հանդերձ, իբրև խոսք նշանակում է «արևիկ», այնպես էլ և **իսոլ-դ** և **սար-թենիկ**. նշանակում են ջրի տերը փաղաքշական ձևով։ Իսկ վիպասանության ավանդապահն է եղել իրոք կելտական ցեղը Հայաստանում, ինչպես և Արևմուտքում։ Այս վիպասանությունը Հայաստանում պահող Գող-թան կամ kol-ten երկրի բնակիչները ներկայացնում են կելտերի անվանակից նույն հաբեթազն կելտական ցեղ, առաջ Սև ծովի եզերքին բնակող Կովկասի ամենահին բնաջանյա ազգը։

Միջնադարյան գրականության երևելի գաղիացի հետ Gaston Paris ասում է. «Աշխարհի գրականական պատմության մեջ չկա ավելի ապշեցուցիչ երևույթ քան այն, որ մի բուռն փոքրիկ ժողովուրդ արհամարհված, հալածված ծովերից դեն, էն տեղ էլ կոխված իր կալվածքի մի անկյունի մեջ ետ մղված—խոսքս Բրետանցվոց մասին է—իր բանաստեղծությամբ նվաճել է ռոմանական և գերմանական եվրոպան իրան հաղթողներին անգամ, թե նրանց որոնց իր անունը անծանոթ էր, լծագիր է եղել իր իղձերով, իր հերոսներով, իր երաժշտությամբ, ուր արտահայտում էր իր հոգին և երազները, ուր նա փնտրել որոնել է իր երևակայության հրճվանքն և իր ցավերի մխիթարությունը։ Այս վիպասանությունն, ինքն մեռած, իր հետամնաց սերունդը ստեղծելով, միայն միջին դարերը չէ հրապուրել։ Նորագույն բանաստեղծությունը la poésie moderne, տակավին նորա ոգով է դրոշմված (empreignée) և նրան է պարտական կական տարրերը»։

Երևելի գիտնականը չէր սխալվում, բայց ակամա խեղաթյուրում էր իսկական եղելությունը, իր ցեղագիտական գիտելիքների հորիզոնը սահմանափակված լինելով արևմտյան

Եվրոպայի սահմաններում և կելտական ցպատմական դարաշրջանների հեռանկարը հազիվ հասցնում էր հույն նախապատմական հնությանը։ Կելտերը, այն էլ հաբեթազն կելտեր, միայն ավանդապահ են եղել այս վիպասանությանը։ Tristan և Iseult ստեղծագործությունն երեք ցեղային հաբեթական միջավայրի ծնունդն է։ Հաբեթական ժառանգություն հայտնաբերելով, այս սքանչելի վիպասանությունն—առաջ աստվածներին նվիրված գուսանական երգարան—ներկայացնում էր զուտ հաբեթազն կամ հաբեթազնների հետ խառնված որոշ ժողովուրդների հասարակաց բարքը, և արևելքում էլ հայ՝ մի ուրիշ նույնպես մի բուռն ժողովուրդ, նա ևս արհամարհված ագիտության բույներում, տասնապատիկ ավել և ճընշված հարստահարված իր շինարար ձեռքերից օգտվող ազգերի կողմից, երբեմն նույնպես իր ծննդավայրից Միջերկրյա և Սև ծովերից դեն հալածված, էն տեղ էլ կոխան եղած, իր վերջին կայանի մի անկյունի մեջ հետ մղված և քանիերորդ դարում այն տեղից էլ դուրս քշված և ցիր ու ցան դառնալու սարսափներին մատնված։ Եվ այս «ածու փոքր», ինչպես իր ճշգրիտ լեզվով քանդակախոսում է Խորենացին, հայոց աշխը, ոչ միայն հաբեթական վիպասանության անդրանիկ ժառանգներից մինը, այլ բոլոր նույն համամարդկային աղբյուրից բխած կուլտուրական ավանդի անդրանիկ ժառանգներից լինելով, նրա ամբողջության հավատարիմ պահողն, աճեցնողն ու առատաձեռն ցանողն էր արևելքում և արևմուտքում։ Եվ իրավ բացառիկ ապշեցուցիչ երևույթ չէ՞, որ այս ակների եղելության գիտակցությունը բնավ չենք տեսնում։ Գիտակցություն չի կա և այն բանի թե ինչ առասպելական հորիզոններ է բաց անում մարդկության կարևորագույն հասարակական գործիքի, խոսքի, վերաբերմամբ այն զարմանալի ժողովուրդի մենակ լեզվական հարստությունները, և ինչ ահռելի նյութեր ընձեռում էր սեմական և ուրիշ ազգերի կուլտուրական կապերն ու արմատները մերկացնելու համար։ «Հունձքն առատ, բայց մշակներն բացակա». այս խոսքերով ուզում էի եզրափակելով դասախոսությունս, դիմել հայերին, երիտասարդության հրավիրանոք՝ «եկեք, նոր գիտական լույս» միասին աշխատենք, բայց հրավերքը կլիներ կեղծ և ապարդյուն։ Ո՞րտեղ և ինչպե՞ս։

Ամեն բան գոյություն ունի ոչ այնու, որ նա իր իրողությունն է, այլ նրանով, որ մարդկության գոնյա հասկացող մասը ճանաչում է և հետևապես, ընդունելով, նրան գոյություն է տալիս։ Ոչ միայն ասածներս այլ և նրանց հաստնող եղանակներս արդ եվրոպական գիտության բնավ անծանոթ են։ Եվ հիմք էլ կա անծանոթության։ Բոլոր հարիթադիտության վերաբերյալ գրականությունը ռուսերեն է գրված։

Մեր ուսումը յուրահատուկ բոլոր նորալուր պարագաներով բուսել է արևմուտքի ծիլով պատվաստած գիտության ծառի վրա Ռուսաստանում, Ռուսաստանի նազարեթում, Պետրոգրադում, և անդ այս րոպեիս էլ, զարգանում է իմ բախտակից ալևոր և երիտասարդ գիտնականների շրջանում։ Ի՞նչ անհեթեթ առասպել, էդպես չէ՞։ Դուք էլ իրավունք ունեք։ Ձեզ զբաղեցրի իմ առասպելական աշխարհից բնրված առասպելներով, և ուրեմն ի՞նչ է մնում ինձ, եթե ոչ ներողություն խնդրել՝ ծառայությո՞ւն, ներեցե՞ք։

ՎԵՐՋ

Նիկողայոս Յակովլևիչ Մար

ՀԱՅԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ

Նրա ստեղծագործությունները և նախապատմական կապերը
լեզվաբանության

Николай Яковлевич Мар

АРМЯНСКАЯ КУЛЬТУРА

Ее корни и предисторические
связи по языкознанию

(На армянском языке)

Ереван «Айастан» 1989

Խմբագիր՝ Վ. Մ. Սարգսյան
Նկարիչ՝ Ս. Ս. Մկրտչյան
Գեղ. խմբագիր՝ Գ. Ա. Պապոյան
Տեխն. խմբագիր՝ Կ. Գ. Սարգսյան
Վերատեսուչ սրբագրիչ՝ Ա. Գ. Հարությունյան

ИБ 6709

Հանձնված է շարվածքի՝ 23. 3. 89 թ.։

Ստորագրված է տպագրության 7. 06. 1989 թ.։ ՎՖ 00065։

Չորմատ՝ 84×108 1/32։ Թուղթ տպագրական № 1։ Տառատեսակ՝ «Դրքի ու վթրական»։ Տպագրության բարձր. 2,31 պայմ. տպագր. մամ., 2,52 պայմ. ներկ. թերթ, 1,85 հրատ. մամ.։ Տպաքանակ՝ 50.000։ Պատվեր՝ 212։ Գինը՝ 20 կոպ.։

«Հայաստան» հրատարակչություն, Երևան—9, Ավ. Բահակյան 28։

Издательство «Айастан», Ереван-9, ул. А. Исаакяна, 28.

ՀԽՍՀ հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի առևտրի գործերի պետական կոմիտեի № 2 տպարան, Երևան, Տերյան 44։

Типография № 2 Госкомитета Арм. ССР по делам издательств, полиграфии и книжной торговли, Ереван, ул. Теряна, 44.